

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig
SPORTS MAGAZINE

32րդ ՏԱՐԻ, 2013, ԹԻԻ 9 (375) - VOL. XXXII N° 9

السنة الثانية والثلاثون - العدد رقم 9



ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ 2013



ԵՂԲ. ՍՏԵՓԱՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԿԸ ՎԵՐԸՆՏՐՈՒԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ

23 Սեպտեմբեր 2013-ին, Ստեփանակերտի մեջ տեղի ունեցավ Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտեի ընդհանուր ժողովը, որ որոշեց համահայկական ձմեռնային առաջին մարզախաղերը կատարել 26 Փետրուարին 4 Մարտ 2014, Ծաղկաձորի մեջ, Հայաստան:

Ընդհանուր ժողովին ներկայ գըտնուեցան համահայկական Խաղերու գործադիր կոմիտեի նախագահ, Հայաստանի մարմնամարզի նախարար Իշխան Զաքարեան, Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եւ կոմիտեութեան փոխ նախագահ եղբ. Ստեփան Տեր Պետրոսեան, կոմիտեութեան փոխ նախագահ Ալպեր Պոյաճեան եւ մնացեալ անդամներ, երեք բանաւոր բացակայութեամբ:

Ընդհանուր ժողովի օրակարգի գլխաւոր կէտերէն մէկն էր գործադիր կոմիտեի կազմի ընտրութիւնը: Անփոփոխ պահուեցան կոմիտեի նախագահը, երկու փոխ նախագահները եւ գլխաւոր քարտուղարը: Հ.Ս.Ը.Մ.ի կողմէ եղբ. Հրաչ Սիսեռեանի



փոխարէն գործադիր կոմիտեի անդամ ընտրուեցաւ Երոպայէն եղբ. Արամ Սիսեռեան: Ընտրուեցան նաեւ Արթուր Մոսիեան, Վարդան Բալայեան եւ Տիգրան Ալթուն: Գործադիր կոմիտեի անդամներ Յակոբ Կիրմիզեան եւ Ղազարոս Ունան ընտրուեցան կոմիտեի պատուոյ անդամներ: Կազմի մնացեալ անդամները մնացին անփոփոխ:

Որոշուեցաւ ձմեռնային յաջորդ մարզախաղերը կազմակերպել 2017 թուականին, ամառնային մարզախաղերուն հետ հերթական դրութիւն ստեղծելու համար:

ԵՂԲ. ՀՐԱՉ ՇՄԱԲՈՆԵԱՆ Հ.Ս. ՇԱՐԺՈՒՄԻ ԵՐՈՒԱՍԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿՈՄԻՏԷԻ ԱՆԴԱՄ

3 Հոկտեմբերին տեղի ունեցաւ Հ.Ս.Շարժումի Երասիական շրջանի հինգերորդ համագումարը, որուն մասնակից երկիրներու պատուիրակութիւնները ներկայացուցին կատարուած գործունէութեան եռամեայ հաշւետուութիւն:



Համագումարին ողջոյնի խօսքով հանդես եկան Հ.Ս.Շարժումի ներկայացուցիչներ եւ բարձրատիճան հիւրեր:

Առաջին օրը տեղի ունեցաւ շրջանային կոմիտեի անդամներու

ընտրութիւն: Ներկայացուած վեց թեկնածուներէն կոմիտեի անդամ ընտրուեցան առաւելագոյն ձայներ ապահոված չորս ներկայացուցիչներ, որոնց կարգին՝ Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Հրաչ Շմալունեան:

Այս առիթով իր եզրափակիչ խօսքը փոխանցեց Եվրասիական շրջանի կոմիտեի գլխաւոր քարտուղար եղբ. Բագրատ Եսայեան: Իր պաշտօնավարութեան շրջանը աւարտելով, եղբ. Եսայեան յաջողութիւն մաղթեց համագումարի ընթացքին:

ԳՈՅԺ ԵՂԲ. ԽՈՐԷՆ ՔԻՐԱԶԵԱՆԻ

Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Ս.Ը.Մ.ի Պուկարիոյ երկար տարիներու հաւատաւոր Հ.Ս.Ը.Մ.ական, «Արտակարգ» պատուանշանի արժանացած եղբ. Խորէն Քիրազեանի մահը, որ տեղի ունեցաւ 1 Նոյեմբեր 2013-ին, Սոֆիայի մեջ: Եղբ. Քիրազեան մասնակցած էր Հ.Ս.Ը.Մ.ի Զ. եւ Է. Պատգամաւորական ժողովներուն:



(Մանրամասնութիւնները յաջորդիւ)



Թիւիւն հիւն երը

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

32ԴԴ ՏԱՐԻ, 2013, ԹԻՒ 9 (375)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 Սեդա Պէշեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Գրիգորիս Պողարեան
 Արօ Մոսիկեան

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Seperation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրժ Համուտ, Եհնիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատակաճառի սակն է 4000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ճշդուած է 48000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Անդրադարձ	3
■ Ակնարկ	6
■ Սկաուտական	9
■ Մասնաճիւղէ Մասնաճիւղ	16
■ Մեր Կորուստները	33



ԲԱԺԻՆՆԵՐ

■ Միջազգային	14
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեացքով	40





ՄԱՐԶԻԿԱԿԱՆ
ԳՐԱԿՐԱԿԱՆ
ԵՎ
ԺՐՈՂՈՒԹՅԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԻՋԻՆ
ՍԵՐՈՒՆԴԷՆ

ԾԱՌ-ԱՅՈՒԹԻՒՆ

(95-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ
ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋԻՆ ՍԵՐՈՒՆԴԷՆ)

Անցնող 95 տարիներուն մագնիսի ուժգնութեամբ բառ մը իրեն քաշեց Հ.Մ.-Ը.Մ.ական յաջորդական սերունդները: Բառ մը, որ այսօր ալ իրեն կը կապէ միութեան միջին սերունդը, այժմ պատնէշի վրայ գտնուող տղաքն ու աղջիկները:

Ծառայութիւնն է այդ: Ծառայութեան մեծ դպրոց մը եղաւ ինքը՝ Հ.Մ.Ը.Մ.ը, ուր նորահաս սերունդներու մարմնակրթութեան համար հազարաւորներ եկան ու գիտակից զոհաբերութեամբ տուին ինչ որ ունէին կեանքէն ու անցան:

Կարգը այժմ հասած է Հ.Մ.Ը.Մ.ական ներկայ սերունդին, երեց սերունդին յաջորդած միջին սերունդին, որպէսզի ան եւս գիտակցի այս ճշմարտութեան եւ կարենայ անձնական մօտեցումներէն բարձրանալ գաղափարական մարդու վայել բարձրութեան՝ դառնալու համար տիպարը կրտսեր սերունդին, որովհետեւ վաղուան սերունդը եթէ այլասերի եւ դասալիք ըլլայ, ինք պատասխանատուութեան բաժին պիտի ունենայ այդ մեղքին մէջ:

Հետեւաբար, միութեան միջին սերունդէն մեր սպասումն է, որ գաղափարական իր համոզումները սակարկութեան նիւթ չդարձնէ: Ազգային-միութենական իր արժէքներէն ետդարձ չկատարէ: Հաւատայ ու գործէ ամուր նկարագիրով, ուժգին թափով եւ անսպառ խանդավառութեամբ: Արդարեւ, խանդավառութիւնն է աղբիւրը Հ.Մ.Ը.Մ.ի նման երիտասարդական բոլոր տեսակի շարժումներու: Խանդավառութիւն, որ հետզհետէ ծաւալ ստանալով՝ կը կազմէ սերունդի մը հաւաքական կամքը՝ իր ընդհանրական հարցերուն եւ մտահոգութիւններուն իրագործման ճամբուն վրայ:

Եթէ մեր այսօրը վարդագոյն չէ, պէտք չէ յուսահատիլ: Եթէ անցեալէն ժառանգուած թերութիւններ կամ դժուարութիւններ կան, պայման չէ որ անոնք նոյնը մնան եւ չսրբագրուին: Այսօրուան սերունդէն կ'ակնկալուի չկրկնել հիներու սխալները, այլ՝ հետեւիլ այն գեղեցիկ գործերուն, որոնցմով մեր կեանքը Հ.Մ.Ը.Մ.ական ձեւ եւ դիմագիծ ստացաւ անցնող 95 տարիներուն:

Ինչ որ կ'ընենք այսօր, իր անդրադարձը կ'ունենայ վաղը: Ու եթէ կ'ուզենք, անպայման կ'ուզենք, որ Հ.Մ.Ը.Մ.ական գալիք սերունդները ըլլան առաքինի, զոհաբերող, կարգապահ ու հաւատաւոր, նման սերունդներ պատրաստողներուն հաւատքը պէտք չէ ըլլայ զգացական տրամադրութիւններու շարք մը, այլ՝ մտածուած, ծրագրուած եւ լաւապէս հետապնդուած ծրագիր մը, որ նպատակադրէ միութեան հզօրացումը եւ միութենական շարքերուն թիով ու որակով բարելաւումը:

Սեփական ուժի գիտակցութիւնը պէտք է ըլլայ այսօրուան սերունդը առաջնորդող սկզբունքը: Աւելի լաւ պատրաստուելու եւ ավելի լաւ գործելու հրամայականը պէտք է ըլլայ օրուան մարտահրաւերը, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ական խօսքն ու գործը ավելի ազդու ներկայութիւն ըլլան մեր կեանքէն ներս ու ավելի լաւ ծառայեն Հ.Մ.Ը.Մ.ի նպատակին:

Այս հաւատքով կ'ողջունենք միութեան միջին սերունդը եւ անոր յաջողութիւններուն մէջ կը տեսնենք 95-ամեայ մեր միութեան փայլուն ապագան, իբրեւ գրաւական ընդունելով ծառայելու, անսակարկ ծառայելու, անվերջ ծառայելու անոր պատրաստակամութիւնը:

«ԺԻՐԱՅՐ ԵՒ ՍՐԲՈՒԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ» ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԻՆ 200 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ ՆՈՒԻՐԵԼԷ ԵՏՔ

«Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԵԱՆՔ Է, ԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ, ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԵՒ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՆԳՐՈՒՄՆՆԵՐՈՎ»

Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան յարաբերական յանձնախումբին որոշումով, վերջերս հանդիպում-գրոյց մը ունեցանք վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Ժիրայր Սարգիսեանի հետ: Հանդիպումը կատարուեցաւ Սան Ֆրանսիսքոյի իր աշխատանոցին մէջ: Եղբ. Ժիրայր Սարգիսեան տէրն ու տնօրէնն է «ԺԻՐԱՅՐ» ոսկերչական հաստատութեան: Լիբանան ծնած ու մեծցած՝ ան աշխատանքային ծրագիրով տարիներ ամբողջ ապրած է Ափրիկեան ցամա-



քամա, ապա վերջնականապէս հաստատուած է Միացեալ Նահանգներու Սան Ֆրանսիսքո քաղաքը, իր կողակիցին՝ քոյր Սրբուկ Սարգիսեանի եւ երեք զաւակներուն ու թոռներուն հետ: Եղբ. Ժիրայր Սարգիսեան վերջերս իշխանական նուիրատրութիւն մը կատարեց իր շատ սիրելի միութեան Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտոյի «Մասիս» մասնաճիւղի նոր մարզադաշտի կառուցման նպատակին: Մարզադաշտը պիտի կրէ «Ժիրայր Եւ Սրբուկ Սարգիսեան» անունը: Ծրագիրը ներկայիս կը գտնուի շինարարական փուլի մէջ:

Զրուցավար՝ Սիլվա Գրիգորեան ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ

Հանդիպման պահն է:
Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին մէջ իր ծառայութեամբ, վաստակով եւ նիւթաբարոյական ներդրումով յիշարժան ամուլ մը՝ եղբ. Ժիրայր եւ քոյր Սրբուկ Սարգիսեաններ լայն ու խաղաղ ժպիտով մը կը դիմաւորեն զիս իրենց գրասենեակին մէջ: Այս պատուական զոյգին դիմաց վաստակով համեստ Հ.Մ.Ը.Մ.ական մը՝ ես, խոր յուզում կ'ապրիմ առաջին իսկ վայրկեանէն: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու հպարտանքը հարազատութեան քաղցր քողով մը կը ծածկէ մեր հանդիպումը: Հին ու նոր սերունդի Հ.Մ.Ը.Մ.ականներու ջերմ հանդիպում մըն է ան, նաեւ կամրջում մը՝ անցեալի եւ ապագայի միջեւ: Միտքերը կը հոսին ազատօրէն, յիշատակները կը տողանցեն անարգել,

վերստին կը կենդանանան Լիբանանէն Սան Ֆրանսիսքո նուաճումներու եւ յաղթանակի վառ ապրումներ՝ բարձրացած Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած մեծ ընտանիքի ոգեղէն հէնքին վրայ:
Մեր զրոյցը սկսանք եղբ. Ժիրայր Սարգիսեանի Հ.Մ.Ը.Մ.ի անդամագրութեան պատմութեամբ:
«Ե՞րբ, ի՞նչպէս եւ ո՞ւր» հարցումին՝ ան պատասխանեց հետեւեալը:
-Հայրս կորսնցուցած եմ մէկ տարեկանիս, Պէյրութ: Մայրս՝ ազգասէր կին մը, կը հաւատար, որ ես պէտք է մասկազմեմ ազգային հաւաքականութեան մը: Ինչպէս Հ.Մ.Ը.Մ.ը կը թեկադրէ՝ «Առողջ միտք՝ առողջ մարմինի մէջ» զարգացնելու համար, պէտք է անդամագրուէի որպէս սկաուտ եւ որպէս մարզիկ: Առաջին առիթով եղած եմ գայլիկ, 1947 թուականին: Սկաուտական տարազը հրապուրած է զիս տակաւին մանուկ հասակիս, ապա հաւաքականութեան

մը պատկանելու զգացումը զիս մղած է սկստակապես եւ մարզական զանազան պատասխանատուութիւններու ստանձնման: Հ.Մ.Լ.Մ.ի յարկին տակ է, որ ծանօթացած եմ նաեւ քոյր Սրբուկին՝ կողակիցիս, որ իր կարգին Հ.Մ.Լ.Մ.ի մարզական թելին մէջ ունեցած է յատկանշական ներդրում՝ իբրեւ պասքեթպոլի յայտնի մարզիկ: Պատասխանատուութիւններու առումով, տարիներով եղած եմ վարչական, ապա՝ իննսուսականներու սկիզբը մաս կազմած եմ Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան, իսկ 1995-ին՝ յաջորդաբար երկու շրջան ընտրուած եմ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, վերջին շրջանին ստանձնելով փոխ ատենապետի պաշտօնը:

Մեր գրոյցին ընթացքին եղբ. Ժիրայրէն տեղեկացանք, թէ ան իր մասնակցութիւնը բերած է Յունաստանի եւ Եգիպտոսի մէջ կատարուած համաշխարհային եւ համարաբական ճամպորիներու, իսկ Հայաստանի անկախութենէն անմիջապէս ետք, նիւթաբարոյական ներդրում ունեցած է Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հիմնադրման եւ ծրագրաւորումի աշխատանքներուն մէջ:

Եղբ. Ժիրայր կը պատկանի անձնուրաց Հ.Մ.Լ.Մ.ականներու փաղանգին: «Հին դպրոց»ի վերջին մոհիկաններէն՝ ան կը հաւատայ, որ «նուիրեալ եւ օրինակելի հայ առաջնորդներու անսակարկ գործունէութեամբ է, որ հայ հաւաքականութիւնը կը թրծուի ազգային իտէալներով ու Հ.Մ.Լ.Մ.ի ոգիով, եւ իբրեւ այդպիսին կը ծառայէ իր ազգին ու հայրենիքին»:

Այն հարցումին, թէ որո՞նք են Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին գլխաւոր մարտահրաւէրները այսօր, եղբայրը իբրեւ ներկայի հրամայական նշեց, որ շրջաններու մէջ պէտք է կառուցուին ժամանակի ոգիին յարիր մարզահամալիրներ, որոնք իբրեւ ազգային հաւաքավայր պիտի ծառայեն նոր սերունդի գաւակներուն՝ զանոնք միեւնոյն յարկին տակ ընդունելով եւ անոնց հայեցի կրթութիւն ջամբելով: Մանրամասնելով իր խօսքը, եղբ. Ժիրայր աւելցուց, թէ իր կեանքի կարեւոր կարգախօսներէն մէկը եղած է մնայուն ձգտում ունենալու անհրաժեշտութիւնը. «Ամէն հայորդի պէտք է իր կեանքին մէջ ունենայ առողջ դատողութիւն, լաւագոյնին ձգտելու ներքին կարգապահութիւն, իսկ Հ.Մ.Լ.Մ.ականը՝ բան մըն ալ աւելի, որ կը կոչուի ազգային գիտակցութիւն, որովհետեւ ազգային գիտակցութիւնը կը հանդիսանայ կորիզը ծառայութեան օրինակելի հանգամանքներու վրայ բարձրացած բարոյական անխորտակելի այն կազմակերպութեան, որ կը կրէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն անունը»:

Հ.Մ.Լ.Մ.ական ամոլին հետ մեր գրոյցը ընդգրկեց նաեւ Սան Ֆրանսիսքոյի հայ գաղութին կեանքը եւ Հ.Մ.Լ.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին գործունէութիւնը: Եղբայր Սարգիսեան մեծ ոգեւորութեամբ խօսեցաւ իրեն շատ հարազատ գաղու-

«Ամէն հայորդի պէտք է իր կեանքին մէջ ունենայ առողջ դատողութիւն, լաւագոյնին ձգտելու ներքին կարգապահութիւն, իսկ Հ.Մ.Լ.Մ.ականը՝ բան մըն ալ աւելի, որ կը կոչուի ազգային գիտակցութիւն, որովհետեւ ազգային գիտակցութիւնը կը հանդիսանայ կորիզը ծառայութեան օրինակելի հանգամանքներու վրայ բարձրացած բարոյական անխորտակելի այն կազմակերպութեան, որ կը կրէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն անունը»:

թին ներկայ իրավիճակին ու ձեռք բերած նուաճումներուն մասին՝ յիշեցնելով, որ Սան Ֆրանսիսքոյի գաղութը տասնամեակներու ընթացքին գերազանցած է ինքզինք՝ կազմակերպական, տնտեսական եւ բարոյական գետնի վրայ, իսկ Հ.Մ.Լ.Մ.ի տեղւոյն մասնաճիւղը միշտ եղած է յառաջատար՝ ազգային ոգին եւ միութենական ջահը բարձր պահելով տասնամեակներ շարունակ: «Հ.Մ.Լ.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղը ներկայիս ինքնաբաւ է, ունի իր սեփական կեդրոնը, կը գործէ արհեստագիտական բարձր միջոցներով, վարչութիւններ ընդհանրապէս շատ լաւ յարաբերութիւններու մէջ եղած են գաղութի քոյր կազմակերպութիւններուն, դպրոցին ու եկեղեցիին հետ: Այսօր, երբ կը նայիմ Ամերիկա հասակ առած նոր սերունդի ներկայացուցիչներուն, հոգիս կը լեց-

ւի հպարտութեան զգացումով: Երեւակայեցէ՛ք, որ երէկուան գայլիկներս այսօր վարչական պատասխանատուութիւններ ստանձնած Հ.Մ.Լ.Մ.ականներ են եւ իրենց աշխատանքը կը վարեն ըստ միութեանս սկզբունքներուն եւ Հ.Մ.Լ.Մ.ի վայել ջանասիրութեան:

Մեր հանդիպումը, որ աւելի քան մէկ ժամ տեւեց, համեմուած էր նաեւ քոյր Սրբուկի օգտաշատ միջամտութիւններով: Ան ճիգ չխնայեց եղբ. Ժիրայրի խօսքերուն վաւերական բնոյթ տալու համար տեղին յստակացումներ կատարելու: Թուականներ, պատահարներ եւ վայրեր եկան հաստատելու պատմական իրողութիւնները: Բայց Սրբուկ միայն այս չէր իբրեւ հաւատաւոր Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկ, ան եւս ունէր իր մտահոգութիւնները, յատկապէս Լիբանանի պասքեթպոլի աղջկանց խումբին կապուած: Ըստ իրեն, շատ անյարմար է, որ Լիբանանի մէջ Հ.Մ.Լ.Մ.ի տարագով մարզադաշտ կ'իջնեն օտարազգի մարզիկներ. «Ինչո՞ւ պէտք է ընթացք տալ այս երեւոյթին», հարցուց ան՝ քիչ մը վրդոված՝ դիտել տալով, որ Հ.Մ.Լ.Մ.ի նպատակը միայն յաղթել չէ, միայն յաղթանակներով ապրել չէ, այլ՝ անիկա ազգային եւ հայապահպանման կարեւոր կռուան է, մանաւանդ՝ օտար երկիրներու տակ հասակ առած հայ սերունդներուն համար:

Մեր գրոյցը թաւալեցաւ շատ մտերմիկ մթնոլորտի մէջ՝ առիթ տալով բոլորիս, որ սրտբացօրէն արտայայտուիմ իբրեւ միութենականներ մեզ եւ մեր միութիւնը յուզող հարցերու մասին:

«Հ.Մ.Լ.Մ.ը ամբողջական կեանք է», հաստատեց եղբ. Ժիրայր Սարգիսեան: Երբ հարց տուինք, թէ յետ բազմաշխատ տարիներու, այսօր ի՞նչպէս կը բնութագրէք միութենական ձեր վաստակն ու պատկանելիութեան զգացումը, ան աւելցուց. «Ինչպէս մարդկային կեանքը ունի հանգրուաններ՝ ծնունդէն մինչեւ մահ, Հ.Մ.Լ.Մ.ականն ալ միութենէն ներս ունի իր կեանքի հանգրուանները, որոնք հիմնականին մէջ

կը բնորոշուին նախ՝ ստանալու (գիտութիւն, զարգացում, դաստիարակութիւն), ապա՝ վերադարձնելու (պատասխանատուութիւններ եւ նիւթաբարոյական ներդրումներ), եւ ի վերջոյ ստանձնելու հանգրուաններով»: Եղբայրը քիչ մը երկար կանգ առաւ վերջինին վրայ, որ ստանձնման հանգրուանն է. ան այս մասին խօսեցաւ օրինակելի դաստիարակի մը նման՝ պատմելով, թէ ինչպէ՛ս օր մը «Ասպարէզ» օրաթերթին մէջ հանդիպած է «Մասիս» մասնաճիւղի նոր շէնքի գնման ի նպաստ քուէարկութեան մէկ պատկերին, ուր Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյր-եղբայրները միաձայնութեամբ կը քուէարկէին նոր կեդրոնի բացման ի նպաստ:


«Բազմատասնեակ ձեռքեր բարձրացուած էին՝ ստեղծելով յաղթանակի ոգեւորիչ մթնոլորտ: Չկրցայ անտարբեր մնալ այս գեղեցիկ պատկերին դիմաց եւ այդ պահուն իսկ վճռեցի ջահակիրի դեր ստանձնել, այսինքն՝ տակաւին չմարմնաւորուած գաղափար մը կենսագործել իմ իսկ անձնական միջոցներով: Ահա այս է, զոր կ'ուզեմ լուսարձակի տակ առնել՝ իբրեւ ստանձնումի վերջին հանգրուան: Երբ

«Երբ կեանքը մեզի կու տայ, երբ կը յաջողինք մեր անձնական բարօրութիւնը հաստատել մեր սեփական կեանքին մէջ, պէտք է պատրաստ ըլլանք նաեւ մեզի հետ բարձրացնելու մեր հաւաքական կամքը՝ թռիչք տալով մեր ազգային երազներուն ու ձգտումներուն, դառնալով ջահակիրը ազգային նպատակի մը, պարտաւորութեան մը թէ միութենական կարելոր գործունէութեան մը: Այլապէս, ի՞նչպէս կարելի կ'ըլլայ մեկնաբանել Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» կարգախօսին իմաստը»:

կեանքը մեզի կու տայ, երբ կը յաջողինք մեր անձնական բարօրութիւնը հաստատել մեր սեփական կեանքին մէջ, պէտք է պատրաստ ըլլանք նաեւ մեզի հետ բարձրացնելու մեր հաւաքական կամքը՝ թռիչք տալով մեր ազգային երազներուն ու ձգտումներուն, դառնալով ջահակիրը ազգային նպատակի մը, պարտաւորութեան մը թէ միութենական կարելոր գործունէութեան մը: Այլապէս, ի՞նչպէս կարելի կ'ըլլայ մեկնաբանել Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» կարգախօսին իմաստը», ինքնագոհ միութենականի յուսադրիչ ժպիտով մը իր խօսքը կը փակէ եղբ. Ժիրայր Սարգիսեան:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Յակոբ Կիլիւմեան (Սիտնի) 300 \$
- Եղբ. Գառնիկ Մկրտիչեանի Սիտնի այցելութեան առիթով՝ Եղբ. Յովհաննէս Մարտոյեան 100 \$



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

Հ.Մ.Ը.Մ.Ը ԻՆՉՊԷՍ ԳՐԱԲԻՉ ԴԱՐՁՆԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՄԵՐ ՀԻՄՆԱԴԻՐ ԴԵՄՔԵՐԷՆ ԻՆՉ ԿՐՆԱՆՔ ՍՈՐՎԻ

ՄԵՐ ՀԻՄՆԱԴԻՐ ԴԵՄՔԵՐԷՆ ԻՆՉ ԿՐՆԱՆՔ ՍՈՐՎԻ

**Բժ. Շահե Ենիգոմյան
ՍԱՆԹԱ ԳԼԱՐԱ**

Համաշխարհայնացումը եւ արդի արհեստագիտութիւնը սկսած են փոխել ղեկավարութեան դիրքեր հասնելու խաղին օրէնքները: Փորձառութիւնը հաշուի կ'առնուի, անհրաժեշտ է, բայց այլեւս չունի անցեալի իր առաջնահերթութիւնը: Նոր, թարմ մտածողութիւնը եւ յարմարելու կարողութիւնը աւելի կարեւոր յատկանիշներ են: Մենք ականատես կ'ըլլանք մեծ կազմակերպութիւններու ղեկին երիտասարդ առաջնորդներու յատկանշական թիւի մը յայտնութեան, եւ գարմանալի չէ, որ կ'ապրինք ժամանակի մը մէջ, ուր համագործակցութիւնը կը գերիշխէ, ուր երիտասարդ եւ աւելի փորձառու սերունդներ իրարու հետ շփում կ'ունենան, կը հաղորդակցին:

Հ.Մ.Ը.Մ., որեւէ այլ կազմակերպութեան նման, նման եղափոխութենէ մը կ'անցնի: Մենք կը քաջալերենք երիտասարդ նոր սերունդը, որպէսզի աւելի մասնակից դառնայ միութենական մեր կեանքին: Հակառակ այն իրողութեան, որ ոեւէ ղեկավար, երիտասարդ կամ հասուն տարիքի, պէտք է ամբողջացնէ հիմնական չափանիշները առաքելութեան մը հաւատալու եւ նուիրուելու: Մեզի նման կազմակերպութիւններու գործին յաջողութիւնը կախեալ է նաեւ համագործակցութեան մշակոյթին ազդող գործօններէն:

Եւ երկրորդ՝ հեզասահ գործակցութիւն երիտասարդ եւ տարեց ղեկավարներու միջեւ:


Պատմութիւնը կը հասաստէ, որ Հ.Մ.Ը.Մ. ունեցած է երեք հիմնադիրներ.՝ Շաւարշ Քրիսեան, Գրիգոր Յակոբեան եւ Յովհաննէս Հինդլեան: Հ.Մ.Ը.Մ. 1918-ին հիմնուած է իբրեւ կազմակերպուած եւ միասնական կազմակերպութիւն, մէկ հոփանիի տակ համախմբելով մինչ այդ թուլօրէն միացած մարզական ակումբներն ու սկաուտական խումբերը: Բայց երբ Հ.Մ.Ը.Մ. օրինականացաւ, Շաւարշ Քրիսեան արդէն նահատակուած էր (1915) եւ Հինդլեան անդամ չէր հիմնադիր մարմնին: Ուրեմն, ինչո՞ւ երեքն ալ աներկբայօրէն եւ արդարօրէն նկատուած են Հ.Մ.Ը.Մ.ի ճարտարապետներն ու հիմնադիրները:

Պատասխանը կը գտնուի այն փաստին մէջ, որ երեքն ալ զիրար կը լրացնեն ու կ'ամբողջացնեն: Երեքն ալ հաւատացած են նոր, թարմ գաղափարներու եւ յարմարած են 20-րդ դարասկզբի կարիքներուն: Անոնք արժէքներու հանդէպ ընդհանրական հաւատք մը ունէին եւ մեծ կորովով կ'աշխատէին: Նոյն տեսիլքը ունենալով հանդերձ, սակայն, իւրաքանչիւրը արմատական եւ անզուգական ներդրում ունեցաւ միութեան կեանքին մէջ: Անոնք յաջողեցան, որովհետեւ իրարու հետ գործակցեցան:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԹԱՐՄ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՐՈՎԸ

1910 թուականին մարտահրաւէրն էր ի՞նչպէս հզօրացնել հայ ազգը, տարածելով մարմնակրթութեան գաղափարը, հայեցակարգը: Այդ թուականներուն համար թարմ եւ նորօրինակ գաղափար մը, սթաթուս քոյի մարտահրաւէր մը, որ կը պահանջէ մտածողութեան եւ գործելաձեւի փոփոխութիւն: Այդ թարմ գաղափարները գերիշխեցին եւ արդիւնաբեր եղան:

Ընկերութիւնը բարեփոխելու նպատակով հայութեան կեանքին մէջ մարմնակրթութիւնը ներմուծելու Շաւարշ Քրիսեանի կիրքէն, եռանդէն մինչեւ Գրիգոր Յակոբեան, որ ղեկավարեց մեր կազմակերպութեան միաձուլումը եւ եղաւ հայ ազգային արիապետ, չմոռնալով նաեւ Յովհաննէս Հինդլեանի գաղափարական ներդրումը,



ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԼԱԻ ՕՐԻՆԱԿ ԾԱՌԱՅԵԼ


Յաճախ կը հպարտանանք մեր անցեալով: Մեզ կը հիացնէ այն փաստը, թէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ղէմքերը որքա՛ն ատակ էին: Ի դէպ, 20-րդ դարու սկիզբի մարտահրաւէրները դիմագրաւելու մեր հիմնադիրներուն միջոցները կրնան օգտակար ըլլալ լուծելու նաեւ 21-րդ դարու սկիզբի մեր կարգ մը մարտահրաւէրները:

Վերլուծումները կը բացայայտեն, որ երկու հիմնական գործօններ արմատական ազդեցութիւն ունեցած են արդիւնքին վրայ. առաջին՝ ընդհանուր տեսլական մը ազգին կարիքներուն յարմարելու ճկունութեամբ,

առաջնորդութիւնը եւ իմաստութիւնը, այսօրուան սերունդը, երիտասարդ եւ տարեց, շատ բան ունի սորվելիք հիմնադիր ղէմքերու իրարու հետ գործակցութեան եղանակէն:

Հ.Մ.Ը.Մ. հիմնուեցաւ 1918-ին, բայց նախորդող տարիները՝ 1910-1914 ամէնէն կազմակերպչական տարիներն էին: Այդ ժամանակ, Հինդլեան ամէնէն տարեցն էր, Յակոբեան՝ միջին տարիքի, Քրիսեան՝ ամէնէն երիտասարդն ու ամէնէն գործունեան: Հինդլեան իմաստունն էր, յարգուած եւ փորձառու դաստիարակը: Յակոբեան համազօր էր այսօրուան գործադիր խորհուրդի ղեկավարին, որ ոչ միայն մարդիկը համախմբեց, այլեւ՝ անձնական օրինակով առաջնորդեց, նիւթապէս եւ բարոյապէս աջակցելով ծրագիրներու: Բայց իրականութիւնը այն էր, որ ուժական երիտասարդ գործիչ Քրիսեանն էր փոփոխութեան իսկական մղիչ ղէմքը: Ինք միւսներէն խորհուրդներ առաւ, բայց ինքն էր որ իրականացուց գանձը:

Պէտք է նշել, որ 1910-ին Քրիսեան միայն 25 տարեկան էր: Կ'ակնածինք երբ ակնարկ մը նետենք նուազ քան հինգ տարիներու ընթացքին Քրիսեանի կատարած նուաճումներուն վրայ.՝ հայկական ողիմպիական առաջին խաղերու կազմակերպիչ, Փութպոլի հայկական ախոյեանութեան առաջին մրցաշարքի հիմնադիր, «Մարմնամարզ» թերթի խմբագիր, առաջինը, Հինդլեանի եւ Յակոբեանի հետ, հայկական սկաուտական շարժումի նախաձեռնող, «Մարմնամարզ»ի մէջ հայ սկաուտական կանոնները գրող, իգական սեռը քաջալերող, որպէսզի անոնք աթլետիզմ կիրարկեն, Աղեքսանդրիոյ «Կամք» մարմնամարզական շարժումի ստեղծման մղիչ ուժ:



Եւրոպայէն բերած գիտելիքները: Երբ ժամանակը կու գայ 1911-ին «Մարմնամարզ» թերթը հրատարակելու, որպէսզի կարելի ըլլայ նախաձեռնել առողջապահական դաստիարակութեան, ո՞վ է ամէնէն կարեւոր գրող-թղթակիցը: Կրկին Հինդլեանն է: Ան հայկական սկաուտութեան գաղափարախօսն է, սկաուտական շարժումը հայկական հանրութեան ներկայացնողը: Եւ ո՞վ է գործնապաշտ խորհրդատուն, առաջին սկաուտ առաջնորդը եւ նոյն ատեն նիւթապէս ամէնէն առատաձեռն աջակցողը «Մարմնամարզ»ին: Գրիգոր Յակոբեանն է:

Երեք ղեկավարները աշխատանքի միացեալ խումբ մըն էին, զիրար ամբողջացնող ու լրացնող:

ԴԱՐ ՄԸ ԵՒ ԱՆԴԻՆ

Աշխարհաքաղաքական պայմանները այսօր մեծապէս տարբեր են: Իբրեւ ազգ մենք վերապրեցանք Յեղասպանութենէն եւ անհատապէս յաջողութիւններ արձանագրեցինք: Հ.Մ.Ը.Մ. դարձաւ համաշխարհային կազմակերպութիւն:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Վերոնշեալ պատճառներուն եւ շատ աւելիին համար, Շաւարշ Քրիսեան կը նկատուի Հ.Մ.Ը.Մ.ի տեսլականին ռահվիրան: Տպաւորիչ է այն, որ Քրիսեան շատ արագ բազմաթիւ նուաճումներ կատարած է իր երիտասարդ տարիքին՝ 24-29: Թէեւ, ճիշդ է, որ ինք չէր կրնար այդքան նուաճումներ կատարել առանց իր երէցներուն ուղղութեան, աջակցութեան, եւ հոս է որ ի յայտ կու գայ խմբային աշխատանքին կարեւորութիւնը:

Օրինակները բազմաթիւ են. 1909-ին Քրիսեան Եւրոպայէն Պոլիս կը վերադառնայ բարձր կորովով եւ նոր գաղափարներով: Ինք կ'ուզէ նախաձեռնել մարմնակրթութեան կազմակերպման ու տարածման գործին: Ո՞վ է գլխաւոր զօրակցողը, աջակցողը, որ դռներ կը բանայ անոր դիմաց: Հինդլեանն է, յարգուած կրթական մշակը, դաստիարակը եւ Սկիւտարի դպրոցին տնօրէնը, որ Քրիսեանի առիթը կ'ընձեռէ, որպէսզի իր աշակերտներուն հետ կիրարկէ



Այժմ ունինք անկախ պետութիւն: Այսուհանդերձ, մեր ազգային մարտահրաւէրները կը մնան գրեթէ նոյնը, այսինքն՝ դարձեալ մեր դիմաց կը ցցուի այն հարցումը, թէ ի՞նչպէս օգնել որ ներկայի եւ ապագայի հայ սերունդները հպարտ ըլլան իրենց մշակոյթով եւ յանձնառու մնան հայկական իրենց ինքնութեան ու պատկանելիութեան:

Դար մը եւ անդին, մենք սկիզբի օրերու հետ բազմաթիւ զուգահեռներ կը գտնենք: Հ.Մ.Ը.Մ. այսօր ունի միջին տարիքի Յակոբեանի տիպարով ղեկավարներ, որոնք յաջողած են իրենց անձնական կեանքերուն մէջ, լաւ կառավարողներ են եւ շատերն ալ առատաձեռն նուիրատուներ են: Մենք բախտաւոր ենք, որ տակաւին ունինք աւելի տարեց, փորձառու, յարգարժան Հինդլեան

նի նման դաստիարակներ եւս: Մեզի կը պակսին Քրիսեանի նման խանդավառ երիտասարդները:

Ճիշդ է, որ Քրիսեան բացառութիւն մըն էր եւ կարելի չէ կրկնօրինակել զայն, բայց ան հազիւ 20 տարիքը թեւակոխած՝ եթէ ատակ եղած է հայ կեանքին մէջ հսկայական փոփոխութիւններ ներմուծելու, ինչո՞ւ չհաւատանք, որ ժամանակակից, նորօրեայ Քրիսեանները եւս կրնան նոյնը ընել: Այնպէս չէ, որ մենք այսօր գուրկ ենք ուշիմ, հնարամիտ, նուիրեալ եւ կորովի երիտասարդ ղեկավարներէ: Մենք իսկապէս ունինք երիտասարդ ղեկավարներ, որոնք իրենց շուրջիններէն կը զանազանունին միջազգային իրենց հմտութիւններով եւ կարողութեամբ:

Մեր հիմնադիր երեք դէմքերը զիրար ամբողջացուցած են, եւ իբրեւ խումբ գործած են: Տարեցները զօրակցած, աջակցած են երիտասարդ Քրիսեանին եւ օրհնած են անոր տեսլականը: Հինդլեան եւ Յակոբեան տեսած են Քրիսեանի ներուժը եւ անոր տարիքը իրենց համար հարց չէ եղած: Անոնք հասկըցած են երիտասարդութեան արժէքը, քաջալերած են ուժական փոփոխութիւնը եւ խիզախութիւնը ունեցած են առաջնորդելու եւ ուղղելու Քրիսեանը: Բանային հետեւեալն է՝ Յակոբեանի եւ Հինդլեանի տիպարով այսօրուան ղեկավարներու հաւաքական գիտակցութիւնը մղել հաւատարմ այսօրուան Քրիսեաններու կարողութիւններուն եւ ներուժին: Բայց որպէսզի նորօրեայ Քրիսեանները ոտքի հանենք, մեր հաւաքական ղեկավարութիւնը պէտք է անդրադառնայ նաեւ, որ տարիքի 20-40 սահմանը ամէնէն արդիւնաբեր եւ նորութիւններ բերող շրջանն է: Պէտք է օգտագործել գիտնալ այդ տարիքի սերունդը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՍԵՐՈՒՆԴԸ

2018-ը՝ Հ.Մ.Ը.Մ-ի հարիւրամեակը շատ մօտ է: Մեր մաղթանքն է, որ ամբողջ աշխարհի մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի ղեկավարութեան այսօրուան սերունդը հետեւի Հինդլեանի եւ Յակոբեանի օրինակին: Մեզմէ անոնք որոնք փորձառու են պէտք է յանձնառու մնան, բայց մենք պէտք է որոնենք, փնտռենք, վստահինք, զօրակցինք, աջակցինք, դաստիարակենք եւ խնամենք նոր Քրիսեանները: Այդ տաղանդաւոր երիտասարդ ղեկավարները ներկայ են եւ պէտք է ստուերէն դուրս գան: Մենք ականատեսը եղած ենք անոնցմէ շատերուն, իբրեւ սկառու առաջնորդներ եւ երիտասարդ մարզիկներ, բայց նաեւ՝ ռազմավարական ծրագրումի հանդիպումներուն ընթացքին:

Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ մեծ յանձնառութեան տէր երիտա-



սարդ անհատականութիւններ շատ կան, որոնք ունին ղեկավարման, համացանցային, հաղորդակցութեան, տեղեկատուական արհեստագիտութեան տիրապետման լաւ կարողութիւններ: Ուրիշներ ալ կան, որոնք տակաւին պէտք է յայտնաբերուին: Այս երիտասարդ անհատականութիւնները մեծ ընդունակութիւններով մեր շուրջն են: Մենք անոնց պարզապէս չենք տուած փայլելու պատշաճ

տեղն ու առիթը:

Մեր սերունդը տակաւին կը հաւատայ, թէ մենք ենք փարոսը եւ միակ ուժը, որ կրնայ առաջնորդել մեր կազմակերպութիւնը: Ճիշդ մեր շուրջի աշխարհին նման, ասիկա Հ.Մ.Ը.Մ-ին համար վիճելի փաստ մըն է այլեւս:

Այսօր, իսկական ուժը երիտասարդ, նուիրեալ անհատն է, որուն հետ մենք պէտք է փորձենք գտնել հասարակաց տեսլական մը: Մեր սերունդը կրնայ ծառայել իբրեւ հայելի, որ կը ցոլացնէ երիտասարդութեան լոյսը: Մենք պէտք է գործելու առիթը տանք անոնց՝ բարելաւելով եւ արդիականացնելով աշխատանքի մեր մեթոտները: Անոնք ունին կարողութիւններ փայլելու եւ առաջնորդելու իրենց հասակակիցները եւ մեզ:

Հաղորդակցութիւնը անհրաժեշտութիւն է կազմակերպութեան մը աւելի մեծ օգուտին համար: 2011 թուականի 10-րդ Պատգամաւորական ժողովէն ի վեր, Հ.Մ.Ը.Մ. ունի երիտասարդութեան ունեցածին զուգահեռ տեսլական մը: Մենք խօսքի սահմաններէն շատ անդին գտնուող հանգրուանի մը մէջն ենք. մենք ի վերջոյ շօշափելի քայլեր կ'առնենք այժմէականացնելու համար մեր աշխատանքի մեթոտները: Հիմա անհրաժեշտ է դրական փոփոխութիւնը երիտասարդութեան փոխանցել ժամանակակից հաղորդակցութեան միջոցներով եւ ապա անոնց տրամադրել բեմ եւ ստեղծել մասնակցութեան առիթներ: Անոնք օգնելու մեծ կարելիութիւններ ունին: Վստահ եմ, որ անոնք յարգալից պիտի մնան տարեցներու հանդէպ, միաժամանակ միութեան ընծայելով իրենց կորովն ու թարմ մտածողութիւնը: Երբ անոնք զգան, որ ողջունելի են, անոնք մասնակից, յանձնառու պիտի ըլլան: Հսկողութիւնը տարեց դաստիարակներու կողմէ անշուշտ անհրաժեշտ է, բայց երիտասարդութիւնը եթէ ինքզինք խումբին մէկ մասը զգայ, հաճոյքով, կամովին պիտի ընդունի հսկողութիւնը:

Շրջանային եւ մասնաճիւղերու ղեկավարութեանց պարտականութիւնն է ըլլալ նախաձեռնող, կապուելու, հաղորդակցելու երիտասարդութեան հետ, բացատրելու նոր մօտեցումը եւ նախքան մեր հարիւրամեակը, ամբողջական ուժգնութեամբ կազմակերպութեան յառաջատար դիրքերու հասցնելու երիտասարդ, կարող ուժեր:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԵՐԱՈՐԱԿԱՒՈՐՄԱՆ ԵՒ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ՄԻՋ-ՑԱՄԱՔԱՄԱՍԱՑԻՆ ՄԻԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՔ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Թղթակից ԹՈՐՈՆԹՕ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Կեդրոնական Սկաուտական Յանձնախումբին կազմակերպութեամբ, միջ-ցամաքամասային խմբապետներու վերաորակաւորման եւ Վկայեալ կարգի միացեալ դասընթացքը սկիզբ առաւ Կիրակի, 25 Օգոստոս 2013-ին, Թորոնթոյի Սէնթ Քաթրինզ շրջանի «Ուեթմասքիուին» բանակավայրին մէջ, մասնակցութեամբ Գանատայի շրջանէն 24, Հարաւային Ամերիկայէն 13, Աւստրալիայէն 4, Արեւմտեան Միացեալ Նահանգներէն 2, Արեւելեան Միացեալ Նահանգներէն 3 գայլիկ-արծուիկ, արի-արենոյշ, երէց-պարմանուհի խումբերու խմբապետ-խմբապետուհիներու:

ԲԱՅՈՒՄԸ

Միացեալ դասընթացքին բացման

ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան սկաուտական ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան, Կեդրոնական Սկաուտական Յանձնախումբի անդամներ՝ քոյրեր Թայլին Հինտոյեան (Արեւմտեան Մ.Ն.), Ալին Պաղտասարեան (Արեւելեան Մ.Ն.), եղբ. Գառնիկ Նազարէթեան (Գանատա), Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամներ, գլխաւորութեամբ ատենապետ եղբ. Տիրան Շահինեանի, Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամներ, մասնաճիւղերու վարչութիւններու եւ Սկաուտ-Խորհուրդներու անդամներ:



Դրօշակի արարողութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Շրջանային Վարչութեան անունով բարի գալուստի խօսք փոխանցեց եղբ. Տիրան Շահինեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ նմանօրինակ դասընթացքներու կարեւորութեան եւ շրջաններու մէջ ունենալիք դրական ազդեցութեան: Իր խօսքը Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ուղղելով, եղբ. Շահինեան շնորհակալութիւն յայտնեց, որ դասընթացքը կը կազմա-



կերպուի Թորոնթոյի մէջ, հիւրընկալութեան քաղցր պարտականութիւնը վստահելով Գանատայի շրջանին:

Եղբ. Կարպիս Գապասագալեան կեդրոնական Վարչութեան անունով խօսք առնելով, դասընթացքի մասնակցող խմբապետ-խմբապետուհիները հրաւիրեց գիտակցելու այն պարտականութեան, որուն կոչուած անոնք՝ իրենց պաշտօններուն առընթեր դաստիարակելու նորահաս սերունդները կակող թաթիկէն մինչեւ երէցները, եւ այն ակնկալութեան, զոր շրջաններու պատասխանատու մարմինները ունին իրենցմէ: Ապա, խօսքը հիւրընկալ շրջանին՝ Գանատային ուղղելով, եղբ. Գապասագալեան բարձրօրէն զնահատեց շրջանի մասնաճիւղերն ու պատասխանատու մարմինները, որոնք իրենց ջերմ հիւրընկալութեամբ ոչինչ խնայած են հեռաւոր թէ մօտակայ շրջաններէն ժամանած քոյր-եղբայրներուն հանգստութիւնը ապահովելու համար:

Հանգամանաւոր խօսքերէն ետք, եղբ. Գառնիկ Նազարէթեան իր կողմէ պատրաստուած յիշատակի ըս-



կառուտական գաւազաններ յանձնեց եղբ. Կարպիս Գապասագալեանին եւ քոյրեր Թալին Հինտոյեանին ու Ալին Պաղտասարեանին:

ԴԱՍԸՆԹԱՅՔԸ

Միջ-ցամաքամասային խմբապետներու վերաորակաւորման եւ Վկայեալ կարգի միացեալ դասընթացքին մասնակցող խմբապետ-խմբապետուհիները, իրենց վարած պաշտօններուն համաձայն, բաժնուեցան վեց խմբակներու, կազմելով երկու խումբ. իւրաքանչիւրը իր կարգին ունեցաւ իր խմբապետական եւ աստիճանաւորական կազմը, որ օրական հերթականութեամբ կատարեց նոր նշանակում եւ ընտրութիւն՝ առիթը տալով բոլորին պատասխանատուութիւն ստանձնելու: Օրուան հերթապահութիւնը վստահուեցաւ բարձրաստիճան խմբապետ-խմբապետուհիներու:

Դասընթացքին նիւթերը առանձնաբար ուսումնասիրուեցան խմբակներու մէջ, ապա խմբակին կողմէ

ներկայացուցեցան բոլորին եւ անոնց քննարկումը կատարուեցաւ նիւթին պատասխանատու համադրողին ներկայութեամբ: Մասնագիտական նիւթերու կողքին, հարց ու պատասխանի ձեւով փոխանցուեցան չորս դասախօսութիւններ:-

●Կրօնական դաստիարակութեան կարեւորութիւնը- Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիբեան:

●Սփիւռքի կազմութիւնն ու ներկայ իրավիճակը- եղբ. Մոսիկ Թովուզեան:

●Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան դերը Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն մէջ- եղբ. Սեւակ Քիւփէլեան:

●Նիստ-կաց եւ մարմնի լեզուն («Body language»)-քոյր Հուրի Նազարէթեան:

Դասընթացքը ընդգրկեց նաեւ սկաուտական արարողութիւններ եւ կարգապահական վարժութիւններ, որոնք փորձարկուեցան գործնական կիրարկումներով:

Դասընթացքին յայտագիրը ընդգրկեց խաղեր, որոնք աւելի աշխուժացուցին մասնակիցները:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան յուշանուէրով մը կը պատուէ Առաջնորդ Խաժակ Արք. Յակոբեանը:

ապա յատուկ դասաւորումով մը՝ Ճորճթաուն կեդրոնը, ուր Մեծ Եղեռնէն ետք ապաստան գտած են ջարդերէն ճողոպրած 50 որբեր: Խոնարհելէ ետք անոնց յիշատակին զետեղուած յուշաքարին առջեւ, դասընթացքի մասնակից խմբապետ-խմբապետուհիները երեկոյեան մեկնեցան բանակավայր:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դասընթացքին վերջընթեր օրը, յետմիջօրէին, բանակողները առիթը ունեցան նաւապտոյտով վայելելու Նիակարայի ջրվէժները, իսկ երեկոյեան, Սէնթ Գաթրինգի ակումբին մէջ անոնք ընթրիքի հիւրը եղան Քէմպրիճի մասնաճիւղի վարչութեան:

Դասընթացքի նախօրեակին եւ աւարտին, արտասահմանէն ժամանողներու մեծամասնութիւնը իջեւանեցաւ Հ.Մ.Ը.Մ.ականներու Մոնթրէլի եւ Թորոնթոյի բնակարանները: Թորոնթոյի մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպեց բարի գալուստի ընդունելութեան երեկոյ մը:

Դասընթացքի նախօրեակին, մասնակցողները ընթրիքի հիւրը եղան տեղւոյն Հ.Յ.Դ. կոմիտէին, իսկ Շաբաթ, 24 Օգոստոսի առաւօտեան, բանակավայր մեկնելէ առաջ, անոնք նախաճաշի հիւրը եղան Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիբեանին եւ գեղեցիկ գուգադիպութեամբ մը վայելեցին Թեմի Առաջնորդ Խաժակ Արք. Յակոբեանին ներկայութիւնը, որ իր հայրական յորդորներն ու օրհնութիւնը տուաւ խմբապետներուն, ապա Հայր Մեղրիկ յուշանուէրներ յանձնեց ներկայներուն:

Դասընթացքին վերջընթեր գիշերը, Քէմպրիճի մասնաճիւղը դասընթացքի մասնակցողները եւ շրջանի պատասխանատու մարմինները ընկերային ջերմ մթնոլորտի մէջ հիւրընկալեց ընթրիքի երեկոյով մը:

Դասընթացքին մասնակիցները բանակավայր հասնելէ առաջ այցելեցին քաղաքին տեսարժան վայրերը,



ՓԱԿՈՒՄԸ

Դասընթացքի փակման արարողութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 29 Օգոստոս 2013-ին:

Դրօշակի արարողութենէն առաջ, Կեդրոնական Վարչութեան սկաուտական ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան, որ ներկայ էր դասընթացքի ամբողջ տեւողութեան, խօսք առնելով, առաջին հերթին անդրադարձաւ այն երեւոյթին, որ նմանօրինակ ձեւարկներուն ընդհանրապէս նախատրամադրութեամբ մը կը մէկտեղուին կազմակերպողներն ու դասընթացքին մասնակցողները: Եղբայրը կարեւորութեամբ ընդգծեց շրջաններու պատասխանատու մարմիններու ակնկալութիւնը այս դասընթացքէն, որ առնչուած է դասընթացքի մասնակից խմբապետներու արդիւնաւէտութեան: Հետեւաբար, եղբ. Գապասագալեան խմբապետներուն թելադրեց գործել յանձնառու գիտակցութեամբ, յիշեցնելով որ դասընթացքը պիտի արժեւորուի այն ատեն, երբ իրենց ստացած գիտելիքները լաւագոյն ձեւով կը փոխանցեն ու կը կիրարկեն իրենց սկաուտական գործունէութեանց ընթացքին:

Եղբ. Գապասագալեան այս առիթով բարձրօրէն գնահատեց դասընթացքի մասնակիցներուն լրջութիւնն ու ամբողջական գործակցութիւնը՝ նիւթերու պատրաստութեան եւ ներկայացման իմաստով:

Եղբ. Գապասագալեան իր վիզի սկաուտական փողկապը քակելով, գետեղեց սեղանին վրայ եւ խմբապետներուն առաջարկեց իրենց ստորագրութեամբ մտովի վերանորոգել իրենց սկաուտական խոստումը եւ որպէս խմբապետներ խոստանալ՝

- Գործել Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտութեան նպատակին թելադրութեամբ:

- Գործել ինքնավստահ ու անվհատ:

- Գործել Հ.Մ.Ը.Մ-ի դրոշմին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին վայել կերպով:

Եղբայրը իր խօսքին աւարտին ջերմօրէն գնահատեց Կեղրոնական Սկաուտական Յանձնախումբի անդամները, որոնք ապահովեցին դասընթացքին յաջողութիւնը՝ շնորհիւ իրենց անվերապահ գործակցութեան եւ անձնուիրութեան: Ան գնահատեց նաեւ դասընթացքին մասնակից շրջաններու վարչութիւններն ու պատասխանատու կազմերը, որոնք ոչինչ

իննայած էին դասընթացքին մասնակցութեան համար: Եղբայրը իր երախտագիտութիւնը յայտնեց Գանատայի Շրջանային Վարչութեան, ի մասնաւորի Թորոնթոյի եւ Քէմպրիճի մասնաճիւղերուն, որոնք իրենց բացառիկ հիւրընկալութեամբ սատար հանդիսացան դասընթացքին յաջողութեան:

Փակման արարողութիւնը վերջ գտաւ յուշանուէրներու փոխանակումով: Դրօշակները վար բերուեցան դանդաղ ընթացքով: Բոլորին աչքերը անոնց վրայ մնացին անշարժ, փորձելով կասեցնել բաժանման պահը, ապա յուզումնախառն ձեռք-ձեռքի շղթայուած՝ բոլորը միաբերան երգեցին «Ցտեսութիւն» երգը եւ հրաժեշտ տուին իրարու:

ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ՄՈՆԹՐԷԱԿԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՒՆՆԵՐԸ



մաղթեց եղբոր եւ խմբապետներու վերաորակաւորման դասընթացքին անդրադառնալով, բարձրօրէն գնահատեց կատարուած աշխատանքը, որուն արդիւնքը անպայման մօտիկ ապագային պիտի քաղեն մասնակցող շրջանները, նշեց ան:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Գապասագալեան խօսք առնելով արժեւորեց այն սերունդները, որոնք օտար ափերու վրայ ազգային, կրօնական եւ մշակութային անեղծ արժէքներ փոխանցած են իրերայաջորդ սերունդներու, ասոր ապացոյցը նորահաս այն սերունդն է, որ իր հայեցի դաստիարակութեամբ մասնակցած է այս դասընթացքին՝ նոր գիտելիքներով զինուելու եւ գործի դաշտ նետուելու համար, իր կարգին միութեան յաջորդող սերունդներուն փոխանցելու «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին թելադրականութիւնը:

Եղբ. Գապասագալեան վարչական կազմերուն վստահեցուց, որ խմբապետները պատրաստ են ու խոստացած են իրենց պարտականութիւնները լաւագոյն ձեւով կատարելու: Ապա, խօսքը խմբապետներուն ուղղելով, ան յիշեցուց նուիրումի գիտակցութեամբ գործելու հրամայականը:

Եղբ. Գապասագալեան իր խօսքին աւարտին բարձրօրէն գնահատեց Գանատայի Շրջանային Վարչութիւնն ու Սկաուտ. Խորհուրդը, որոնք ջատագո-

Միջ-ցամաքամասային խմբապետներու վերաորակաւորման դասընթացքին առիթով Գանատա այցելած Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Կարպիս Գապասագալեան դասընթացքի աւարտին այցելեց նաեւ Մոնթրէալ: Ի պատիւ եղբոր, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Մոնթրէայի մասնաճիւղին կազմակերպութեամբ, Ուրբաթ, 30 Օգոստոս 2013-ին տեղի ունեցաւ ընդունելութիւն մը, որուն ներկայ եղան Շրջանային Վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդի ներկայացուցիչները, Մոնթրէայի եւ Լաւա-

լի մասնաճիւղերու վարչութիւնները եւ Սկաուտ. Խորհուրդի անդամները, տեղւոյն պատկան մարմինները եւ մասնաճիւղերու խմբապետական կազմերը: Իրենց կը միանային նաեւ Հարաւային Ամերիկայի խմբապետները, որոնք մասնակցած էին դասընթացքին, ինչպէս նաեւ՝ նախկին խմբապետներ, որոնք անցեալին գործած էին եղբոր հետ:

Ընդունելութիւնը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 6-ին, Ս. Յակոբ եկեղեցւոյ հանդիսասրահին մէջ: Առաջին հերթին հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Շահինեանը, որ շրջանի անունով բարի գալուստ

վողներն էին այս դասընթացքին իրագործման: Ան շնորհակալութեան խօսք փոխանցեց բոլոր մասնաճիւղերուն, ի մասնաւորի՝ Թորոնթոյի եւ Քէմպրիճի մասնաճիւղերուն, որոնք որպէս հիւրընկալ մասնաճիւղեր ոչինչ խնայեցին դասընթացքի մասնակիցներուն եւ Կեդրոնական Սկաուտական Յանձնախումբի անդամներուն հաճելի կեցութեան համար:

Իր խօսքին աւարտին, եղբ. Գապասագալեան Կեդրոնական Վարչութեան անունով յուշանուէր մը յանձնեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Շահինեանին:

Ընդունելութեան պաշտօնական բաժինէն ետք, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴ ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՅԱԿՈՒԲԵԱՆԻ ՀԵՏ

Կիրակի, 4 Սեպտեմբեր 2013-ին, եղբ. Գապասագալեան, եղբ. Տիրան Շահինեանի ընկերակցութեամբ, ներկայ գտնուեցաւ Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին, որմէ ետք ան հանդիպում մը ունեցաւ Գանա-



տայի Բարեջան Առաջնորդ Սաթակ Արք. Յակոբեանի հետ: Հանդիպման ընթացքին Սրբազան Հայրը դրուատիրով անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան մասին: Եղբ. Գապասագալեան ընդհանուր գիծերու մէջ խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան մասին, ապա հակիրճ ձեւով ներկայացուց շաբթուան ընթացքին տեղի ունեցած խմբապետներու վերադարձուած դասընթացքը

ու անոր դրական արձագանգները մասնակիցներու մօտ:

Հանդիպման աւարտին, եղբ. Գապասագալեան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով Սրբազան Հօր յանձնեց յուշանուէր մը, առ ի երախտագիտութիւն Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ ցուցաբերած իր հայրական հոգատարութեան:

with the complements of

Restaurant Al-Mayass



2013-2014 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ «ՉԵՄՓԻԸՆՁ ԼԻԿ» Ի Ա. ՀԱՆԳՐՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵԻՈՐՈՒՄ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

17

Սեպտեմբեր 2013-ին սկսա ն«Չեմփիընզ Լիկ»ի 2013-2014 տարեշրջանի Ա. հանգրուանի մրցումները: 32 խումբեր, բաժնուած ութը խմբակներու մէջ, կը մրցին տիրանալու համար այս տարուան բաժակին:

Բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ պայքարը պիտի կեդրոնանայ վերջին տարիներու մեծերուն միջեւ. «Պարսա», Պալերն Միլնիիս եւ Ռէալ Մատրիտ տիտղոսին գլխաւոր թեկնածուներն են:

Ա. խմբակին մէջ, չորս մրցումներէ ետք, տակաւին անորոշութիւն կը տիրէ: Մանչեսթըր Եունայթըտ կը գրաւէ Ա. դիրքը, սակայն ան միայն մէկ կէտով կը գերազանցէ Պալերն Լեւերքուզընը: Վերջինը, իր կարգին, մէկ կէտ աւելի ունի Շախթիոր Տոնէցքէն: Այլ խօսքով, խումբերուն յառաջիկայ երկու մրցումները պիտի ըլլան բախտորոշ: Այս խմբակին մէջ, Ռէալ Սոսիէտատ ո՛չ մէկ յաղթանակ արձանագրած է եւ արդէն դուրս մնացած է մրցակցութենէն:

Բ. խմբակին մէջ Մատրիտի Ռէալը արդէն իսկ ապահոված է երկրորդ հանգրուանի իր տոմար: Մնացեալ երեք խումբերը՝ Եուվենթուս, Կալաթասարայ եւ Քոփենհակըն բուն պայքար կը մղեն երկրորդ դիրքին համար: Հոս Եուվէի կազմն է անակնկալը: Ան ցարդ ո՛չ մէկ յաղթանակ արձանագրած է: Վերջին երկու մրցումներուն իտալացիք պէտք է յաղթեն, այլապէս թուրքերը կամ դանիացիք կրնան զիրենք զրկել երկար ճամբորդութիւններէ:

Գ. խմբակի ամէնէն ինքնավստահ կազմը Փարիզ Սէն Ժերմէնն է: Ան ապահոված է յաջորդ հանգրուանի իր մասնակցութիւնը: Յունաստանի Օլիմպիաքոսը անոր հաւանական ընկերակիցը կրնայ ըլլալ: Պենֆիլքայի կազմը այնքան ալ չի տպաւորեր եւ արդիւնքները փայլուն չեն, իսկ Պելճիքայի Անտրըլէխթը արդէն իսկ դուրս մնացած է:

Դ. խմբակին մէջ Պալերն Միլնիիս անսխալական է: Մանչեսթըր Սիթի այս տարի արդէն աւելի դրական արդիւնքներ կ'արձանագրէ եւ պիտի յաջողի անցնիլ Բ. հանգրուան: Մուկուլայի Սէ. Էս. Քա.ն շատ չնչին յոյսեր ունի գերազանցելու Սիթիի կազմը: Չեխիոյ Վիթորիան իր չորս մրցումները աւարտած է պարտութեամբ եւ յաջորդ երկու մրցումները պիտի կատարէ առ ի պարտականութիւն:

Ե. խմբակին մէջ մրցակցութիւնը սուր է Չելսիի, Շալքէի եւ Պագէլի միջեւ: Ամէնէն ապահովը կը թուի ըլլալ Չելսիի

կազմը: Շալքէ եւ Պազէլ կէտերով դրեթէ հաւասար են եւ կը պայքարին երկրորդ դիրքի տիրացման համար: Գերմանական կազմը աւելի հզօր է եւ աւելի դիւրին մրցումներ ունի: Ռումանիոյ Սթէուային մասնակցութիւնը ձեւական է եւ ան յաջորդ երկու մրցումներուն ոչինչ կրնայ կատարել:

Զ. խմբակին մէջ սուր մրցակցութիւն կայ երեք զօրաւոր կազմերու միջեւ: Արսենալ կը գրաւէ Ա. դիրքը: Անոր կը յաջորդէ Իտալիոյ Նափոլին: Ան Անգլիոյ կազմին կը գիջի միայն կոլերու տարբերութեամբ: Ամէնէն անակնկալը Գերմանիոյ Տորթմունտի կազմն է: Ան կը գրաւէ երրորդ դիրքը՝ երեք կէտ ետ մնալով առաջին երկու դիրքերէն: Հետեւաբար, յառաջիկայ երկու մրցումները երեք կազմերուն համար ալ պիտի ըլլան ճակատագրական: Ֆրանսայի Մարսէյը չորս մրցումներն ալ աւարտած է պարտութեամբ:

Է. խմբակին մէջ Աթլետիքօ Մատրիտ յաղթանակէ յաղթանակ կը սուրայ: Ան այս տարեշրջանին թէ՛ Սպանիոյ եւ թէ՛ այս մրցաշարին գլխաւոր թեկնածուներէն է: Բ. դիրքի համար պայքար կը մղեն Չենիթն ու Փորթօն: Յաջորդ երկու մրցումներուն այս կազմերէն ո՛չ մէկը պիտի ուզէ պարտութիւն արձանագրել: Աւստրիա վիեննան ձախող արդիւնքներով դուրս մնացած է մրցակցութենէն:

Ը. խմբակին մէջ «Պարսա»-յի կազմը արդէն իսկ ապահոված է երկրորդ հանգրուանի իր տոմսը: Մնացեալ երեք կազմերը՝ Ա. Սէ. Միլան, Այաքս Ամսթերտամ եւ Սելթիք կը մրցին երկրորդ դիրքի տիրացման համար: Միլանի կազմը կորսըն-





ցուցած է անցեալ տարիներու իր փայլքը եւ դժուարութիւններ կը դիմագրաւէ: Այաքսի կազմը միշտ երիտասարդանալով ինքզինքի վիճակի չէ պարտադրելու, մինչ Սելթիք եւրոպական մակարդակի վրայ միշտ ալ մնացած է յուսանցքի վրայ:

11 Դեկտեմբերին կ'աւարտի Ա. հանգրուանը: Բ. հանգրուանի վիճակաձգութիւնը տեղի պիտի ունենայ 16 Դեկտեմբերին եւ մրցումները կը վերսկսկին 17 Փետրուար 2014-ին:

Յարդ, մրցաշարի կուսքորըն է փորթուգալցի Քրիսթիանօ Ռոնալտօն՝ 8 կոլով:

Նշենք, որ աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ 24 Մայիս 2014-ին, Լիզպոնի մէջ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ 400 ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ



որմէ ետք տեղի ունեցաւ ինը խումբերու մարզիկներու մետալներու տուչութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ական նախկին պասքեթպոլիստներու ձեռամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի պետական վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Պօղոս Պալէոզեան: Ան ըսաւ, որ հակառակ Սուրիոյ դիմագրաւած դժուարութիւններուն, վարչութեան նախաձեռնութեամբ եւ պասքեթպոլի յանձնախումբին աշխատանքներով, ամառնային դպրոցը լաւապէս ծառայեց իր նպատակին՝ մէկ դրօշի տակ համախմբելով աւելի քան 400 փոքրիկներ: Եղբ. Պալէոզեան անդրադարձաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ծրոգ մարզախաղերուն Հայկալի մարզական խումբերուն արձանագրած գնահատելի արդիւնքներուն: Իր խօսքին աւարտին, եղբայրը մետալներով գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի եւ հրատարակչական յանձնախումբերու անդամները:

Ապա, սրահին մէջ յաւելեալ խանդավառութիւն ստեղծելով, եղբ. Ճորճ Գալաճեան հանդէս եկաւ յեղափոխական երգերով, որմէ ետք տեղի ունեցաւ երկրորդ տեսերիզի ցուցադրութիւնը:


Հանդիսութեան վերջընթեր բաժինով բեմ հրաւիրուեցան եւ գնահատանքի յուշանուէրներու արժանացան Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի մարզին երկարամեայ ծառայութիւն ունեցած նախկին մարզիկներ, մարզիչներ եւ պատասխանատուներ:

Այսպէս, յաջորդաբար բեմ բարձրացան եղբայրներ Տիգրան Գոնտրաճեան, Բաֆֆի Տէր Յակոբ-

ստեղծեցին եւ ապագայ խաղադուլթեան յոյսերով փաստեցին, որ հայր, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ականը, յուսահատիլ չի գիտեր:

Ամառնային դպրոցի աւարտին, Կիրակի, 15 Սեպտեմբեր 2013-ին, «Գէորգ Եսայեան» սրահին մէջ տեղի ունեցաւ դպրոցի փակման հանդիսութիւնը:

Բացման խօսքով հանդէս եկաւ քոյր Անի Ազարիկեան: Քոյրը իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ կարեւորութեան՝ նոր սերունդի դաստիարակութեան գործին մէջ: Ան նաեւ ամփոփ տեղեկութիւններ փոխանցեց դպրոցի եռամսեայ աշխատանքներուն մասին: Ներկաները դիտեցին պասքեթպոլի ամառնային դպրոցին փորձերը ներկայացրնող տեսերիզը,



Րաֆֆի Սիւլահեան ՀԱԼԷՊ

Հակառակ երկրի քաղաքական եւ ապահովական աննպաստ պայմաններուն, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի պետական վարչութեան նախաձեռնութեամբ եւ պասքեթպոլի յանձնախումբի տքնաջան աշխատանքով, անցնող ամառ կեանք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի ամառնային դպրոցը:

Փորձառու մարզիկներու հսկողութեամբ, երեք ամսուան ընթացքին, աւելի քան 400 փոքրիկներ իրենց մասնակցութիւնը բերին պասքեթպոլի դպրոցին: 15 խումբերէ բաղկացած դպրոցի մարզիկները իրենց գնդակներու հարւածներու ձայներով լուսութեան մատնեցին ռումբերու եւ փամփուշտներու ձայները: Իրենց յաղթանակի կորովով անոնք յաղթահարեցին բոլոր տեսակի դժուարութիւնները: Իրենց եռանդով ու անմեղ ժպիտով խանդավառութիւն

եան, Թովմաս Ինքնատուսեան, Մակար Մակարեան, Գէորգ Մաթաս Մատարեան, Խաչիկ Ստեփանեան, Զարեհ Ստեփանեան, Սարգիս Գրատեան, Ներսէս Սարգիսեան, Գէորգ Մաւեան, Խաչիկ Մաւեան, Մանօ Մարգարեան, Սերժ Պալապանեան, քոյրեր Անահիտ Մարգարեան, Ալին Մարկոսեան, Շողիկ Շառոյեան, Մակի Տօնապետեան եւ Ալին Թումիկեան:

Հուսկ, Տաթև Աւագ Քհնյ-Միքայէլեան իր խօսքին մէջ բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի ամառնային դպրոցին աշխատանքը, նշելով թէ Հ.Մ.Ը.Մ-ի դժուարութիւնները միշտ յաղթահարելով կարողացած է գաղութին մէջ բնականօրէն կերպով շարունակել իր աշխատանքը:



Քահանայ հայրը ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ-ական փոքրիկները բեմին վրայ իրենց միութեան դրօշակակիրները դառնալով, իրենց դրօշակը ստացան նախկին մարզիկներէն: Երջանկայիշատակ վագ-

գէն վեհափառին խօսքերը յիշելով՝ քահանայ հայրը ըսաւ, թէ վեհափառը, որ Հ.Մ.Ը.Մ-ական եղած է Ռուսաստանի մէջ, յաճախ կ'ըսէր՝ «Հայ ծնիլը պատիւ է, հայ ապրիլը պայքար է, հայ մեռնիլը յաղթանակ է...»: Վեհափառին խօսքերը փոխ առնելով, Տաթև քահանայ ըսաւ. «Հայ ծնիլը պատիւ է, հայ ապրիլը պայքար է, Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալը կրկնակի պատիւ է եւ հայ մեռնիլը յաղթանակ է»:

Աւարտին, քահանայ հայրը շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ի 95-ամեակը, մեր մեծ միութեան մաղթելով նորանոր յաղթանակներ: Կրկին անգամ եղբ. ձորճ Գալայճեան հանդէս եկաւ յեղափոխական երգերով, որմէ ետք հանդիսութիւնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Հ.Մ.Ը.Մ-Ի ՀԱՒԵՊԻ ՄԱՍՆԱԾԻԳՆԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Րաֆֆի Սիւլահեան ՀԱԼԵՊ

Կիրակի, 21 Յուլիս 2013-ին, աւելի քան 350 քոյր-եղբայրներ ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզ: Այդ օր սովորականէն տարբեր եռանդուն եւ խանդավառ մթնոլորտ մը կը տիրէր բոլորին մօտ: Սկառուտական կանչերն ու ազգայնաշունչ երգերը, գայլիկ-արծուիկին «Լաւագոյն»ը, արի-արեւոյշին «Միշտ պատրաստ»ը կը դղրդէր Ազիզի մօտակայ փողոցները, բոլորին պատգամելով որ Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտը հաւատարիմ կը մնայ իր խոստումին ու նշանաբանին:

Առիթը սկառուտական փոխանցման արարողութիւն էր, որ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի Սկառուտ-Խորհուրդին հովանաւորութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի վարչութեան, Սուրբիոյ Շրջ. Սկառուտ-Խորհուրդին եւ Շրջ. Խմբապետին ներկայութեամբ: Այդ օր կատարուեցաւ Առաջնորդի եւ Փոխ Առաջնորդի աստիճանի տուչութիւն. երէց-պարմանի նախապատրաստական շրջանը աւարտող քոյր-եղբայրները արիական շարքերէն փոխանցուեցան երէց-պարման միաւոր, կատարելով սկառուտական իրենց երգումը: Նոյն առիթով, գայլիկ-արծուիկ միաւորներու կարմիր վոհմակի երամները ստացան երկաստղի վկայական:

Արարողութեան ընթացքին գնահատագիրներ տրուեցան 12-րդ եւ 9-րդ դասարանի պետական քննութիւններուն լաւա-



գոյն արդիւնքները արձանագրած քոյր-եղբայրներուն:

Փոխանցման արարողութեան աւարտին, օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Սկառուտ-Խորհուրդի ատենապետը: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-ամեակին, գնահատեց կրթական փայլուն արդիւնքներով քոյր-եղբայրները եւ շնորհաւորեց նորակազմ երէց-պարման միաւորի քոյր-եղբայրները, բոլորին մաղթելով կորովի աշխատանք:

Արարողութիւնը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԷՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ՊԷՅՐՈՒԹ

Կիրակի, 18 Օգոստոս 2013-ի երեկոյեան ժամը 8-30-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուլթի ակումբի դաշտին մէջ վերջին գոյքի զետեղումով վերջ գտաւ մասնաճիւղին 2012-2013 տարեշրջանի տարեկան բանակումը:

Պասքինթայի Մարթ գիւղին մէջ 11 օրեր բանակելէ ետք, ուշագրաւ էր սկսուածներուն աշխուժութիւնը, եռանդն ու կորովը: Բոլորը անդադար զիրար կը շնորհաւորէին մասնաճիւղին այս նոր իրագործումով:

11 օրերու վրայ երկարող բանակումը շատ յատկանշական եղաւ իր թեմայով («Պէյրուլթ քաղաքը»), իր վեցամսեայ նախապատրաստական աշխատանքներով, սկսուածական յատուկ կազմակերպութեամբ, 160 մասնակիցներու աննախընթաց թիւով, իր տեղութեամբ, կշռոյթով եւ սկսուածական սքանչելի ոգիով:

Այս առիթով, մասնաճիւղը պատրաստած էր բանակումի յատուկ փող-

կապներ, զորս հագուած էին բոլորը՝ կրտսերագոյն անդամէն մինչեւ ըՍ-կառուտ: Խորհուրդի երիցագոյն անդամը, ապրելով Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուլթի յատուկ մթնոլորտը եւ յիշելով Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուլթի յատուկ նշանաբանը՝ «Մէ՛կ մասնաճիւղ, Մէ՛կ ընտանիք»:

Արդարեւ, բանակումի նախապատրաստական աշխատանքները սկսան Յունուար 2013-ին: Յաջորդող քանի մը ամիսներուն աշխատանքները շարունակուեցան եւ դպրոցական տարեշրջաններու փակումէն ետք յաւելեալ թափ ստացան: Գնահատելի էր մասնաճիւղին խմբապետական կազմին կեցւածքը, այն՝ որ բանակումը իրագործել իր նախատեսուած թղթածրարով, առանց որեւէ աշխատանքի նուազեցման ու որեւէ ճիգի խնայման:

Հետեւաբար, Հինգշաբթի, 8 Օգոստոսին, մասնաճիւղին երէց-պարմանուհի, արի-արեւոյշ խմբաւորումները սկսան բանակումին՝ բանակավայրի յատուկ ձեռային աշխատանքներու պատրաստութեամբ:

Կիրակի, 11 Օգոստոս 2013-ին, գայլիկ-արծուիկ աստիճանաւորական կազ-

մերը միացան բանակողներուն՝ օժանդակելու համար մասնաճիւղային ձեռային աշխատանքներու իրագործման:

Բանակումին առաջին չորս օրերը յատկացուած էին բանակավայրի մեծ ձեռայիններուն: Երկուշաբթի, 12 Օգոստոսին, բանակավայր այցելուներուն կը պարգուէր հետեւեալ պատկերը:


Բանակավայրին մուտքը կը ներկայացնէր Պէյրուլթ քաղաքի մուտքը, որմէ ներս կային չորս շրջանակներ, որոնք կը ներկայացնէին Հ.Մ.Ը.Մ-ի սկսուածական չորս ճիւղերը եւ կը կազմէին ժամացոյցի սարք մը, որ յարատեւ կը դառնար: Մուտքէն դէպի ներս, այցելուները կը տեսնէին «մայրաքաղաք»ին կեդրոնական հրապարակը իր «ժամացոյց»ով, «պարտէզ»ով եւ «ճամբաներ»ու բաժանումներով:

Բանակավայրին դրօշակի կայմը կը ներկայացնէր 8 մեթր բարձրութեամբ փիւնիկեան նաւ մը իր դեկով, խարիսխներով, առագաստներով ու պարանի խաղերով:

Բանակավայրին մեծ ձեռայինը կը ներկայացնէր մեծ շուկայ մը, «Mall», իր ճաշարաններով, կամուրջով, լուսաւորումով եւ 10 մեթր բարձրութեամբ պատշգամներով:

Բանակավայրին ճամբաները իրենց ուղղութիւններով, լոյսերով ու աղբամաններով (որոնք կազմուած էին վերամշակուած նիւթերէ՝ հաւաքուած ամբողջ տարեշրջանի ընթացքին) կը ներկայացնէին Պէյրուլթի փողոցները, նոյնիսկ... իրենց փոսերով եւ մառած լոյսերով:

Պէտք չէ մոռնալ նաեւ բաղնիքները, տաք ջուրի սարքաւորումով լոգարանները եւ, անշուշտ, խոհանոցը եւ... փուռը: Այն խոհանոցը, որուն ժրջան յանձնախումբը 11 օր անդադար աշխատեցաւ համեղ ճաշերը որոշուած ժամե-





րուն սկաուտներուն հասցնելու համար:

Այս չորս օրերու աշխատանքներէն ետք, խումբերը անցան իրենց խմբային բանակավայրներուն եւ յաջորդող երկու օրերուն կազմեցին Պէյրուսթ «քաղաք»ի հետեւեալ վայրերը:-

- Արդարութեան պայտա՝ երէցներ, որոնք շինած էին 4 մեթր բարձրութեամբ կշիռք մը:

- Նաւահանգիստ՝ պարմանուհիներ, որոնք շինած էին Պէյրուսթի փարօսը:

- Պետական դրամատուն՝ արիներ, որոնք շինած էին 4 մեթր բարձրութեամբ գանձանակի դուռ մը իր աշխատելաձեւով:

- Պետական թանգարան՝ արենոյշներ, որոնք շինած էին թանգարանին մուտքը եւ գանազան տեղեկութիւններու տախտակ-ցուցադրութիւններ:

- Շարլ Հըլու հանրակառքի կայանը՝ գայլիկներ:

- Պէյրուսթի շուկաներ՝ արծուիկներ:

- Եւ վերջապէս Պէյրուսթի միջազգային օդակայան՝ մոկլիներ:

Բանակավայրի մուտքին գետեղած էր բանակումին պատի թերթը, որ կը ներկայացնէր Պէյրուսթի եւ ի մասնաւորի պէյրուսթահայութեան մասին ընդհանուր զարգացման տեղեկութիւններ:

Չորեքշաբթի, 14 Օգոստոսին բանակավայր ժամանեցին փոքր գայլիկները եւ արծուիկները: Այնուհետեւ սկսան բոլոր խումբերու յայտագիրները: Գայլիկներն ու արծուիկները իրենց աշխուժութեամբ նոր կեանք տուին բանակավայրին:

Հարկ է նշել, թէ Հ.Մ.Ը.Մ-ի ժրտէյ-

տէի մասնաճիւղը կը բանակէր մօտակայ հողաշերտին մէջ: Այդ առիթով տեղի ունեցաւ միացեալ խարուկահանդէս, Երեքշաբթի, 13 Օգոստոսին:

Խումբերու յայտագիրներէն հարկ է նշել հետեւեալները:-

- Երէց-պարմանուհիներու երկօրեայ հետազօտական արշաւ՝ Պասքինթա գիւղ եւ շրջակայք:

- Արի-արենոյշներու «ուլի փէյփըր», արշաւ եւ հանգրուանային խաղեր:

- Գայլիկ-արծուիկներու հանգրուանային խաղեր:

- Հրէջներու դասախօսութիւն, որմէ ետք արիները այցելեցին մօտակայ բլուրին այրած անտառը:

- Արա Ազատի գծագրական աշխատանքային հանդիպում արենուշական խումբին հետ:

- Չմոռնանք նաեւ մարզական չարքաշ խաղերը եւ մրցակցութիւն գանազան այլ խաղեր:

16 Օգոստոսին, բանակավայր ժամանեցին մասնաճիւղին մոկլիները, 3-6 տարեկան, թիւով 15, ու բանակումին կազմը ամբողջացաւ:

Շաբաթ, 17 Օգոստոսի յետմիջօրէի ժամը 3-էն սկսեալ բանակավայր սկսան ժամանել ծնողները եւ հիւրերը: ԸՄ-կաուտները կը կրէին բանակումի յատուկ փողկապները:

Բազմաթիւ ծնողներ, պաշտօնական հիւրեր եւ այլ մասնաճիւղերէ սկաուտներ ներկայ գտնուեցան փակման արարողութեան, ծառատնկումին եւ մրցանակներու բաշխման:

2012-2013 տարեշրջանի «Կայուն ար-

մատներ, փայլուն ապագայ» թեմային հետեւելով, սկաուտներ բանակավայրին մէջ ցանեցին 10 շոճիի եւ 1 մայրիի ծառեր: Այս առիթով ծնողները հիւրասիրեցան սկաուտներու կողմէ պատրաստուած եւ բանակավայրի սկաուտական փուռով շինուած ծոթրինով հացով:

Արարողութեան խօսք առաւ մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդը, որ բարի գալուստ մաղթելէ ետք բոլորին, շնորհաւորեց մրցանակաւորները եւ թիւով 160 սկաուտներն ու խմբապետական կազմը, խոստանալով միշտ նեցուկ կանգնիլ սկաուտներուն՝ կերտելու համար նորանոր նուաճումներ:

Դրօշակի արարողութիւնը, որուն մասնակցեցաւ մասնաճիւղին փոքր նուագախումբը, վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգի երգեցողութեամբ:

Փակման արարողութենէն ետք սկսաւ պաշտօնական խարուկահանդէսը, ուր իւրաքանչիւր խումբ ներկայացուց իր թեմայէն բխած կտորներ, բանակումէն մեկնած դրուագներ եւ իրեն յատուկ երգիծական բացատրութեամբ ներկաներուն փոխանցեց, թէ ուրկէ՞ եւ ի՞նչպէս եկած է Պէյրուսթ բառը: Խարուկահանդէսը աւարտեցաւ աւանդական «Ցտեսութիւն» երգով: Ներկաները խոստացան դարձեալ հանդիպիլ իրարու:

Ներկաներու մեկնումէն ետք ծայր տուաւ հայկական շուրջպարն ու քէֆը, որմէ ետք սկաուտները սկսան քակել ձեռալինները ու հաւաքել բանակավայրը: Աշխատանքը շարունակուեցաւ յաջորդ օր: Կիրակի օր բոլորը վերադար-



ձան Պէյրուիթ, յոգնած, սակայն խանդավառ, անքուն, սակայն փայլուն աչքերով:

Աննախընթաց իր տեւողութեամբ, մասնակիցներու թիւով եւ հսկայ աշխատանքներով բանակումը լաւապէս ծառայեց իր նպատակին, Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանը վերածեց գործի, սկառուտներուն միջեւ կապերը սերտացուց, անոնց վարժեցուց շարքաշ ու ապահով կեանք ապրիլ բնութեան գիրկը:

Վարձքը կատար բոլորին:

Բանակումին յաւելեալ նկարները կարելի է դիտել Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուիթի մասնաճիւղի դիմատետրի էջով <http://facebook.com/groups/homenetmenbeirut>



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԾԻՒԴԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Սկաուտ. Խորհուրդ ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ-ի Պուրն Համուտի մասնաճիւղի 2012-2013 տարեշրջանի տարեկան բանակումը տեղի ունեցաւ 1-8 Սեպտեմբերին, Լեռնայի խրանանի Տէյր Հարֆ շրջանին մէջ:



Կիրակի, 1 Սեպտեմբերին արի-արենոյ խումբերը, երէց-պարմանուհի փաղանգները, գայլիկ, արծուիկ, մոկլի խմբապետական կազմերը, ընկերակցութեամբ մասնաճիւղին Սկաուտ-Խորհուրդին, ուղղուեցան բանակավայր: Չորեքշաբթի, 4 Սեպտեմբերին անոնց միացան գայլիկ վոհմակը եւ արծուիկ երամբ: Շաբաթ առտու բանակավայր հասաւ մոկլի վոհմակը: Ամբողջ շաբթուան ընթացքին անտառը վերածուեցաւ «հայկական գիւղ»ի, որ այս

տարուան բանակումին եւ խարուկահանդէսին թեման էր: Երէց-պարմանուհի «Քաջ Նազար», արի խումբը «Ընկեր Փանջունի», արենոյ խումբը «Կիկոս», գայլիկ վոհմակը «Պուլյ պուլյ մկնիկ», արծուիկ երամբ «Կաթիլ մը մեղր», մոկլի

վոհմակը «Սեւ սամպօ» պատմութիւնները որդեգրած էին իբրեւ բնաբան:

Բոլոր խումբերուն բանակավայրերը եւ ձեռնարկները այս պատմութիւններուն կը վերաբերէին: Խարուկահան-





դէսը, իր կարգին, ներկայացուց հայկական գիւղը:

Չորեքշաբթի բանակավայր այցելեցին մասնաճիւղին Սկաուտ-Խորհուրդն ու խմբապետական կազմը, իսկ Հինգշաբթի՝ մասնաճիւղին վարչութիւնը:

Շաբաթ, 7 Սեպտեմբերին, պաշտօնական փակման արարողութեան ընթացքին երէց փաղանգէն քոյր Ռիթա Անտոնեան, արի խումբէն եղբ. Նարեկ Պասմաճեան, արենոյշ խումբէն քոյր Ճոյս Մալոսեան, գայլիկ վոհմակէն եղբ. Սահակ Պուտարիբեան, արծուիկ երամէն քոյր Միրէյ ժրմմօ ստացան խումբերու լաւագոյն անդամի վկայա-

գիրները՝ Շրջանային խմբապետ եղբ. Ժանօ Քէչէճեանի ձեռամբ: Քոյրեր Միրէյ Շիրինեան, Սարին Յարութիւնեան, Մեղեղի Պուտագեան, Լիւսի Գոճայեան, Մարիա Գարակիւլլէեան եւ Սայրի Տօնապետեան ստացան Վկայեալ կարգի վկայագիրները եւ պէճերը:

Խարուկահանդէսին ներկայ էին՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեան, մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդը, խմբապետական կազմը, ծնողներ եւ բարեկամներ:

Խմբապետական կազմին անունով խօսք առաւ միաւորի խմբապետ եղբ.

Բիւզանդ Մկրտիչեան: Ան շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղի Սկաուտ-Խորհուրդին՝ իր ցուցաբերած վստահութեան եւ օժանդակութեան համար:

Մասնաճիւղի Սկաուտ-Խորհուրդին անունով խօսք առաւ քոյր Մարիա Չոլաքեան: Ան իր խօսքին մէջ ներկայացուց մասնաճիւղին սկաուտական աշխատանքները, անդրադարձաւ նուիրատու հաստատութիւններուն, շրջանի պատկան մարմիններուն, թաղականութեանց, հայրենակցական միութիւններուն եւ բոլոր նուիրատուներուն, որոնց աջակցութեամբ կարելի եղաւ այս տարուան բանակումը յաջողցնել առանց որեւէ մասնակցութեան սակ դանձելու սկաուտներէն:

Մասնաճիւղի վարչութեան անունով խօսք առաւ եղբ. Յակոբ Չալաքեան: Ան անդրադարձաւ մասնաճիւղի տարեկան գլխաւոր աշխատանքներուն, որոնցմէ են՝ մասնաճիւղին 95-ամեակի հանդիսութիւնը եւ ֆութպոլի խումբին համա-Հ.Մ.Ը.Մ.-ական Զ-րդ խաղերու մասնակցութիւնը: Ան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղի Սկաուտ-Խորհուրդին եւ խմբապետական կազմին, որոնց անխոնջ աշխատանքներուն շնորհիւ կարելի եղաւ բանակումը յաջողութեամբ պսակել:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

**Թղթակից
ԱՆԹԻԼԻԱՍ**

12 Օգոստոս 2013-ին տեղի ունեցավ Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի մասնաճիւղի տարեկան բանակումին պաշտօնական բացումը, ներկայութեամբ մասնաճիւղի խմբապետական կազմին, արիւններուն, արենոյններուն, երէցներուն, պարմանուհիներուն, Սկաուտ. Խորհուրդին, վարչութեան եւ մատակարար խմբակին:

Խումբերը մասնաճիւղի շեփորախումբին համաչափ եւ ոգեւորիչ եղանակներուն հետեւելով տողանցեցին մինչեւ դրօշակի կայմը:

Պաշտօնական բացումը յայտարար-

ւելէ ետք, «Ով հայ արի» քայլերգով դրօշակները բարձրացան, իրենց հետ բարձրացնելով 110-120 մատղաշ հոգիներ:

Տարեկան բանակումը համախմբեց մասնաճիւղին տարեկան աշխատանքները, ամփոփելով գիտելիքները, գործնականացնելով տեսական նիւթերը եւ մասնաճիւղին բոլոր խումբերը միաւորելով մէկ վայրի մէջ, բնութեան ծոցին մէջ:

Բացման արարողութիւնը աւարտեցավ մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդին եւ վարչութեան կողմէ փոխանցուած պատգամով մը, ուր թելադրուե-



ցավ միշտ հետեւիլ արիական խոստումին՝ «Հնագանդէ մեծերուդ միշտ»ին: Նաեւ խորհուրդ տրուեցավ յարգել խմբապետները եւ յարգել զիրար, հաւատարիմ մնալ սկաուտական դաւանանքին՝ «սկաուտները մաքուր հայերէն կը խօսին»ին:

Աւելի ուշ, բանակողներուն միացան գայլիկ-արծուիկները եւ մոկլիները՝ խանդավառութիւնը հասցնելով իր գագաթնակէտին:

Շաբաթ, 17 օգոստոսին տեղի ունեցավ բանակումին եզրափակիչ խարուկահանդէսը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՅՆՃԱՐԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

**Թղթակից
ԱՅՆՃԱՐ**

12 - 18 Օգոստոս 2013-ին, Այնճարի մէջ տեղի ունեցավ Հ.Մ.Ը.Մ.Ի տեղւոյն մասնաճիւղին տարեկան բանակումը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի



Այնճարի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին եւ խմբապետական կազմին, հովանաւորութեամբ մասնաճիւղի վարչութեան:

Բանակումին իրենց մասնակցութիւնը բերին «Մուսա Լեռ» պարմանուհի փաղանգը, արի-արենոյ խումբերը, արծուիկ երամը, գայլիկ վոհմակը, ինչպէս նաեւ՝ մոկլի վոհմակը: Մասնակցողներուն ընդհանուր թիւն էր 178:

Բանակումը նպատակ ունէր մասնակցողներուն մօտ գարգացնել չարքաշութեան եւ արկածախնդրութեան ոգին:

Քոյրերն ու եղբայրները բանակումը ճոխացուցին տարբեր տեսակի աշխատանքներով, խաղերով, արշաւներով, ձեռային աշխատանքներով եւ ընկերային պահերով:

Պաշտօնական փակման արարողութեան եւ խարուկահանդէսին, մասնաճիւղի սկաուտներուն կողքին, ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդը, Շրջանային խմբապետութիւնը, մասնաճիւղին վարչութիւնը, նախկին խմբապետներ, ինչպէս նաեւ մեծ թիւով համակիրներ: Փակման արարողութեան խօսք առաւ եղբ. Ժանօ Փամպուրեան՝ մասնաճիւղին խմբապետը, բարձր գնահատելով մասնաճիւղին սկաուտները, խմբապետական կազմը,



Սկսուտ՝ Խորհուրդը, բարերարները եւ բոլոր անոնք, որոնք անսակարկ կերպով օգտակար դարձան բանակումին յաջողութեան:

Խարուկահանդէսի աւարտին քոյրերն ու եղբայրները երգեցին «Ցտեսութիւն» երգը եւ խանդավառ տրամադրութիւններով բաժնուեցան իրարմէ:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԸՆԹՐԻՔ՝ Ի ՊԱՏԻ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԳՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Հինգշաբթի, 22 Օգոստոս 2013-ի երեկոյեան տեղի ունեցաւ գնահատանքի ընթրիք՝ ի պատիւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ-րդ մարզախաղերու Լիբանանի պատուիրակութեան, որ կը բաղկանար 95 քոյր-եղբայրներէ: Ընթրիքին ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ:

Ընթրիքին բացումը կատարեց եւ Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Յարութ Ալաճաճեան:

Եղբ. Ալաճաճեան բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն ըսաւ, որ բացառիկ եւ յատուկ առիթով մը կազմակերպուած է այս ընթրիքը, յատուկ՝ այն իմաստով, որ առաջին անգամը ըլլալով Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքը կը նուաճէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու «Շրջուն բաժակ»ը, որ կը յատկացուի մարզախաղերուն ամէնէն աւելի մետալներ եւ բաժակներ շահած շրջանին:



Շարունակելով, եղբայրը նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը մեծապէս կը գնահատէ բոլոր վարչութիւնները եւ անհատ քոյր-եղբայրները, որոնց նախապատրաստական մեծ ջանքերուն շնորհիւ Լիբանանի շրջանը յաջողեցաւ Գ-րդ մարզախաղերուն ներկայանալ մեծագոյն պատուիրակութեամբ եւ լաւագոյն արդիւնքներով: Այս յաջողութիւնը կ'ապացուցէ, թէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մարզական կեանքը տակաւին աշխոյժ է եւ

առողջ, հաստատեց ան:

Իր խօսքին աւարտին, եղբ. Ալաճաճեան շեշտեց, որ մարզախաղերու «Շրջուն բաժակ»ին տիրացումը ինքնին նուաճում մըն է, որ յաւելեալ պատասխանատուութեան դիմաց կը դնէ բոլորս, որպէսզի Հ.Մ.Ը.Մ. Լիբանան մնայ նոյն բարձունքին վրայ ու փորձէ 10-րդ մարզախաղերուն անգամ մը եւս տիրանալ այդ բաժակին:

Ընթրիքի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեանի կողքին՝ կարկանդակը կտրեցին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի պատուիրակութեան կրտսերագոյն մարզիկուհի քոյր Սանան Խաչերեան եւ կրտսերագոյն մարզիկ եղբ. Հրակ Գլըպոզեան:



ԼԻԲԱՆԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՍԿԱՌԻՏՈՒԹԻԲԻՆԸ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ՅԱՏՈՒԿ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Շաբաթ, 19 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 6-ին, «ԵՈՒՆԵՍԲՕ»-ի մէջ կազմակերպուած հանդիսութեան մը ընթացքին նշուեցաւ լիբանանեան սկառտոլթեան 100-ամեակը: Այս առիթով, նախագահ Միշէլ Սլէյման շքանշաններով պարգեւատրեց լիբանանեան սկառտական ֆետերասիոնը եւ «Քաշշաֆ Մուսլեմ» միութիւնը:



100-ամեակի շքանշաններով եւ յուշանուէրներով պարգեւատրեց մարմնամարզի նախկին նախարարներ, ֆետերասիոնի անդամակցած միութիւններ եւ ֆետերասիոնի գործադիր մարմնի անդամներ: Պարգեւատրեալներու շարքին էին նախկին նախարար Սեպուհ Յովնանեան, յանուն Հ.Մ.-Ը.Մ.ի՝ պետութեան մօտ Հ.Մ.-Ը.Մ.ի սկառտոլթեան ատենապետուհի քոյր Արաքս Շիմ-

շիրեան-Գուլաճեան եւ ֆետերասիոնի մօտ Հ.Մ.-Ը.Մ.ի ներկայացուցիչ եղբ. Վաչէ Նաճարեան:

Նոյն առիթով, Լիբանանի սկառտական ֆետերասիոնը

'Made from one single slice of natural Australian opal'

Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻԲՂԱՅԻՆ 12-ՐԴ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Լոռի Պարագեան Աթոնք

ՀՄԸՄ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ եւ Շրջանային ըՍԿառուտ. Խորհուրդին եւ խմբապետութեան կազմակերպութեամբ, միջ-մասնաճիւղային 12-րդ սկառուտակաճ բանակումը տեղի ունեցաւ յունական ըսկառուտական Փետերասիոնի Սունիոյի բանակավայրին մէջ, 23-24 Օգոստոսին, իբրեւ նախապատրաստական, եւ 25 Օգոստոս-1 Սեպտեմբերին, իբրեւ բուն բանակում, ընդհանուր պատասխանատու ունենալով եղբ. Պետրոս Միքայէլեանը:

Բանակումին մասնակցեցան 24 գայլիկ-արծուիկներ, 28 արի-արենոյշներ, 6 երէց-պարմանուհիներ, 15 խմբապետներ եւ Սկառուտ. Խորհուրդի 6 քոյրեր եւ եղբայրներ, ընդհանուր թիւ՝ 80 հոգի: Բանակավայրը բաժնուեցաւ երեք հատուածի՝ գայլիկ-արծուիկներու, արի-արենոյշներու եւ երէց-պարմանուհիներու:

ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐԸ

Գայլիկ-արծուիկներու վոհմակը գրադեցաւ զանազան աշխատանքներով, ինչպէս՝ երեւակայական ճամբորդութիւններ դէպի զանազան երկիրներ, ծանօթանալով տարբեր ազգերու մշակոյթին ու ապրելակերպին: Այս աշխատանքին նպատակն էր ծանօթանալով ազգերու մշակոյթին, գիտակցելով անոնց կարիքներու առաջնահերթութեանց, ինչպէս՝ անգրագիտութիւն, անօթութիւն, պատերազմ, առողջապահական հարցեր, ցեղասպանութիւն եւ այլն, կարելիութեան սահմաններուն մէջ զօրակցիլ կարիքաւորներու պէտքերուն: Բանակավայր այցելեց օդաչու Սիսի Վերեթեքնիտի, որ գայլիկներուն բացատրեց օդանաւի մէջ գործադրուող օրէնքները:

Այս աշխատանքին զուգահեռ տեղի ունեցան փառլոր փոյնթով ներկայացումներ, հաճելի երգեր ու խաղեր:

ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇՆԵՐ

Արի-արենուշական խումբին ընդհանուր նիւթն էր «Աթէնքի գաղութին կազմութիւնը 1922-էն ետք»: Պատմական դէպքերը կենդանի ձեւով ներկայացուեցան սկառուտներուն կողմէ: Խումբին դաստիարակչական շաբաթական յայտագիրը ընդգրկեց երկու մաս. - առաջինը՝ դասախօսութիւններ, երկրորդը՝ ձեռային եւ շինարարական աշխատանքներ:

Առաջին օրուան ներկայացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Սկառուտ. Խորհուրդի անդամ եղբ. Յա-



րութիւն Մանուկեան: Ան խօսեցաւ «Գաղթականութիւնը Իզմիրէն Աթէնք եւ գաղթականութեան կազմակերպումը առաջին շրջանին» նիւթին շուրջ: Ներկայացումը կատարուեցաւ պատմական յուսանկարներու ցուցադրութեամբ:

Դասախօսական բաժնին մէջ, եղբ. Յակոբ Եթիմեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան եւ գործունէութեան մասին: Յաջորդաբար երեք օրերու ընթացքին եղբ. Յովսէփ Պարագեան դասախօսեց հետեւեալ նիւթերը.-

Ա) Բ. համաշխարհային պատերազմ եւ Յունաստան - յունական դիմադրական շարժումներ - հայերու մասնակցութիւնը յունական դիմադրական շարժումներուն եւ հայերու վիճակը Յունաստանի գրաւման շրջանին՝ 1941-1944:

բ) Համազգայինի հիմնադրութիւնը, համահայկական կառույցը եւ Հայաստանեան գործունէութիւնը:

գ) Փոքր Ասիոյ աղէտէն ետք յունահայ գաղութին կազմութիւնը - զանազան մարզերու կառույցներ - նախատեսութիւններ գաղութի ապագային շուրջ:

Հ.Կ. Խաչի Ֆիքսի «Ռուբինա» մասնաճիւղին կողմէ քոյրեր Ռոզա Պարսամեան, Նուարդ Տատոյեան եւ Երանուհի Ապրոյեան ներկայացուցին ՀՕՄ-ի եւ Հ.Կ.Խաչի պատմութիւնը տեսերիզի միջոցով, նաեւ խօսեցան հայկական աւանդական ճաշերու պատրաստութեան ձեւերու մասին:

ԵՐԷՑ-ՊԱՐՄԱՆՈՒՀԻՆԵՐԸ

Երէց-պարմանուհիներու աշխատանքները ընդգրկեցին շինարարական աշխատանքներ, շաբաշուրթիւն եւ այցելութիւն Լաւրիոյի հնագիտական թանգարան:

Երէցները այցելեցին նաեւ Սունիոյի հրէշներու կեդրոնը եւ ունեցան միօրեայ նաւապտոյտ մը դէպի Ծիա կղզին:



Կղզիին վրայ անոնք այցելեցին մեղուաբուծարան մը, ծանոթութիւններ ստանալով մեղուներու եւ մեղրի պատրաստութեան ձեւին մասին: Փաղանգը նաեւ այցելութիւն մը տուաւ Լաւրիոյի մէջ գտնուող սուզումի կեդրոնը, ուր ծովուն մէջ տեղի ունեցան փորձառական սուզումներ:

Բանակումի նախաձեռնումը օրը մասնակիցները հետեւեցան յատուկ դասախօսութեան մը, որ կը վերաբերէր շուներու մարզումին եւ թէ շուները ինչպէս կրնան օգտակար ըլլալ անդամալոյծ եւ կոյր անձերու: Դասախօս Ռոպէրթ Մինասեանին կ'ընկերանար ոստիկան զօրքի ներկայացուցիչ մը իր մարզումը շունով:

ՓԱԿՄԱՆ ԽԱՐՈՒԿԱՀԱՆԴԵՍ

2013-ը յորելեաններու տարի է: Բանակումի նախաձեռնումը օրը, Ուրբաթ, 30 Օգոստոսի երեկոյեան տեղի ունեցաւ խարուկահանդէս, նշելով Աթէնքի եւ Գոքինիոյ սկաուտական մասնաճիւղերու կազմութեան 90-ամեակը եւ 89-ամեակը, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-ամեակը, ինչպէս նաեւ հայ սկաուտութեան 100+1 տարեդարձը:

Հանդիսութեան ներկայ եղան Ազգ. վարչութեան, Հ.Յ.Դ. կեդրոնական կոմիտէի, Հ.Կ.Խաչի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեանց կազմերու ներկայացուցիչներ, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի, Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու Սկաուտ. Խորհուրդներու անդամներ, Հ.Մ.Ը.Մ-ի տարագաւոր շքանշանակիր քոյրեր ու եղբայրներ, նախկին խմբապետներ եւ յունական սկաուտական ֆետերասիոնի ներկայացուցիչներ:

ԾՆՈՂՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Բանակումին վերջին օրը, Կիրակի, 1 Սեպտեմբերին, բանակավայր այցելեցին սկաուտներու ընտանիքները եւ մասնակցեցան խմբապետական կազմին կողմէ կազմակերպուած խմբային խաղերուն:

Բանակողները առիթը ունեցան գուարճանալու իրենց ծնողներուն հետ եւ զանոնք պարտացուցին բանակավայրը: Այցելուները կէսօրին ճաշեցին բանակավայրին մէջ: Կէսօրէ ետք, ծնողներու ներկայութեամբ տեղի ունեցան սկաուտական փոխանցումներ, պէճերու եւ աստիճաններու տուչութիւններ: Բոլոր բանակողները, ձեռքերով ամուր շղթայ մը կազմելով, երգեցին «Ցտեսութիւն» երգը:

Բանակումի տեւողութեան Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան կազմը յաճախակի այցելութիւններով իր աջակցութիւնը բերաւ աշխատանքներուն:

Իրենց անփոխարինելի օժանդակութիւնը բերին երկու մասնաճիւղերու Սկաուտ. Խորհուրդներու քոյրերը, որոնք առօրեայ հերթականութեամբ հոգացին բանակողներու օրական 5 ժամերու պատրաստութիւնն ու սպասարկութիւնը: Անոնք ստանձնած էին նաեւ բանակումի նախնական դարմանումի բաժինը:

Բանակողներու առողջութեան եւ ապահովութեան համար իրենց կամաւոր աջակցութիւնը բերին հետեւեալ բժիշկները.՝ Յակոբ Աւագեան, Արամ Գասարճեան, Յարութիւն Պէրպէրեան, Վաչէ Տէր Կարապետեան եւ տիկին Ռումանա:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

**Սերոբ Սահակեան
ԵՐՈՒՄԱՂԵՄ**

Ամրան արձակուրդի աւարտին, դպրոցական տարեմուտի սեմին, հակառակ ծանրաբեռնւած եւ խճողուած ժամանակացոյցին, Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի Սկաուտ. Խորհուրդը որոշեց կազմակերպել շրջանին 43-րդ ամառնային բանակումը, ի հեճուկս բոլոր դժուարութեանց եւ անյարմարութեանց:

Արդարեւ, 18 Օգոստոս 2013-ի առաւօտուն, մօտ յիսուն արի-արեւոյշ, գայլիկ-արծուիկներ բարձրացան Բեթղեհէմ քաղաքի Էվերեստ կոչուած բարձունքը եւ հաստատուեցան «Տայիտա Գոմի» կոչուած կրօնական համալիրին պուրակը, ուր հինգ օր ապրեցան սկաուտական կարգ ու սարքով, չարքաշուութեամբ եւ սահմանափակումներով, եւ հակառակ այդ



բոլորին գտան տրամադրութիւնը եւ ժամանակը լայնօրէն զբաղելու սկաուտական թէ ազգային դաստիարակչական ծրագիրներով:

Փակման հանդիսութիւնը, 22 Օգոստոս 2013-ին, դարձաւ բացարձակ վկան կատարուած մեծ աշխատանքի արդիւնքին: Հանդիսութեան ներկայ հասարակութիւնը անգամ մը եւս վկան դարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի արձանագրած ներդրումին՝

զաղութի երիտասարդութեան ազգային դիմագիծի պահպանման դերակատարութեան: Անգամ մը եւս պարզ դարձաւ բոլորին, թէ Հ.Մ.Ը.Մ-ը ամուր կառչած կը մնայ իր ազգային նուիրական յանձնառութեան՝ շնորհիւ իր միշտ թարմացող շարքերուն:

Կարելի չէ պահ մը չսքանչանալ ու շնորհաւորել այս տղոց գործի տենդը ու չհպարտանալ, որ նման տղաք տակաւին ունինք մենք:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ 43-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Տ. Շ. ՄՈՆԹՐԵԱԼ

11 -13 Հոկտեմբեր 2013-ին, Մոնթրեալի Քոլէճ Պուա Պուլտնիոյի երեք մարզասրահները ժամադրափայլը դարձան Հ.Մ.Ը.Մ.ական Փուլտնիոյի, պասթեթպուլի եւ Ֆլոր հաքիի սիրահարներուն, որոնք երեք որ շարունակ հաճոյքով հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի միջ-մասնաճիւղային 43-րդ մարզախաղերուն:

Մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրեալի,

Թորոնթոյի, Գէմպրիճի եւ հիւրաբար Արեւմտեան Մ. Նահանգներու «Սարդարապատ» մասնաճիւղերէն 15 երկսեռ խումբեր, աւելի քան 200 մարզիկ-մարզիկուհիներով:

Մարզախաղերը սկսան Ուրբաթ, 11 Հոկտեմբերի կէսօրին, Հ.Մ.Ը.Մ.ական բարձր խանդավառութեամբ: Յաջորդօր, բազմաթիւ համակիրներու ներկայութեամբ, մարզախաղերը շարունակեցան բոլոր մարզադաշտերուն մէջ, տօնական մթնոլորտ մը ստեղծելով իրենց շուրջ:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ

Շաբաթ, 12 Հոկտեմբերի երեկոյեան տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը՝ «Փալալս» սրահին մէջ: Ճաշկերոյթին ներկայ գտնուեցան միջ-մասնաճիւղային խաղերուն մասնակցած բոլոր մարզիկ-մարզիկուհիները, ոմանք ուրախութիւն ճառագայթող զէմբե-

րով, իսկ ուրիշներ՝ պարտութեան յուսախար տրամադրութիւններով: Խրախճանքի սեղաններուն շուրջ սակայն, խանդավառ մթնոլորտը, երգն ու պարը բոլորին մոռցնել տուին խաղերու արդիւնքները, այնպէս մը որ զանազան մասնաճիւղերէ քով-քովի եկած քոյրեղբայրները, Հ.Մ.Ը.Մ.ական հարազատ մթնոլորտի մէջ, մտերմացան իրարու հետ, երգեցին ու պարեցին մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր: Երեկոն խանդավառեցին երգիչ Գէորգ Արթինեան եւ նուագախումբը:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 13 Հոկտեմբերի յետմիջօրէի ժամը 2-ին տեղի ունեցաւ փակման հանդիսութիւնը, Քոլէճ Պուա Պուլտնիոյի մարզադաշտին վրայ, բազմաթիւ համակիրներու ներկայութեամբ: Հանդիսութեան ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան, Կեդրոնական վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Բիւզանդ Թորիկեան եւ Ջրաչ Տէր Սարգիսեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Րաֆֆի Տօնապետեան, գաղութի ազգային մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ: Իսկական վայելք էր ականատես ըլ-





Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան:

Mike's Photos



Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Կախան:

Mike's Photos

լալ 250-է աւելի մարզիկներու եւ ըսկաուտներու տողանցքին: Փակման հանդիսութեան տողանցքը սկսաւ դրոշակակիրներու առաջնորդութեամբ: Անոնց հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի, Քէմպրիձի, «Սարգարապատ»ի եւ հիւրընկալ Մոնթրէալի մասնաճիւղերու մարզիկները, որոնցմէ ետք՝ Մոնթրէալի ընդհանուր սկաուտական կազմը, արի-արենոյճները, արծուիկ-գայիկները եւ կակուղ թաթիկները:

Օրուան հանդիսավար քոյրեր Էքմէքճեանի եւ Արապեանի բարի գալուստի խօսքերէն ետք, մարզախաղերու մասնակից մասնաճիւղերուն եւ ներկայ հանդիսականներուն շնորհակալութեան խօսք արտասանեց Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի վարչութեան ատենապետուհի քոյր Սօսի Տայեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Շահինեան Շրջանային Վարչութեան

անունով շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի մասնաճիւղի վարչութիւնը եւ կազմակերպիչ յանձնախումբը, որոնց շնորհիւ յաջողութեամբ պսակեցան մարզախաղերը: Եղբ. Շահինեան Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան անդրադառնալով ըսաւ. «Ահաւասիկ, 43-րդ անգամ ըլլալով, Հ.Մ.Ը.Մ.ը իր առաքելութեան հաւատարիմ, այս ամբողջ վրայ կը համախմբէ մեզ, իբրեւ մէկ եւ միեւնոյն ազգի հարազատ ժառանգորդները, իբրեւ մէկ եւ միեւնոյն տեսիլքի հաւատացող անմահ ցեղի զաւակներ, մէկ եւ միեւնոյն ապագայի նայող, նահատակ, սակայն յարեալ ազգի ախոյեաններ»:

Այնուհետեւ, օրուան եզրափակիչ խօսքը արտասանելու հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան: Եղբայրը իր խօսքին մէջ դրուատեց Հ.Մ.Ը.Մ.ի կատարած մեծ դերը իր 104 մասնաճիւղերով: Ան նշեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերուն փայլուն յաջողութիւնը նոր նուաճում մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան համար:

Խօսքերուն յաջորդեց գեղարւեստական յայտագիրը՝ Համազգայինի «Անի» պարախումբին կողմէ:

Ապա տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն: Բաժակներ եւ մետալներ ստացան յաղթական խումբերն ու մարզիկ-մարզիկուհիները: Գանատայի Շրջանային Վարչութիւնը իր կողմէ յուշատախտակներ յանձնեց մարզախաղերու մասնակից մասնաճիւղերու ներկայացուցիչներուն:

Յետմիջօրէին, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի միջ-մասնաճիւղային 43-րդ մարզախաղերը հասան իրենց աւարտին, սակայն անոնց յիշատակներն ու յաջողութիւնները դրոշմուած մնացին բոլոր մասնակիցներու հոգիներուն եւ սրտերուն մէջ, իսկան հանդիսանալով ապագայ նորանոր իրագործումներու:

43-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ

ՊԱՍՔԵԹՊՈՒԼ/ԿՐՏՍԵՐՆԵՐ

- 1. Թորոնթօ
- 2. Քէմպրիձ

ՊԱՍՔԵԹՊՈՒԼ/ԵՐԷՑՆԵՐ

- 1. Մոնթրէալ
- 2. Քէմպրիձ

ՖՈՒԹՊՈՒԼ/ԵՐԷՑՆԵՐ

- 1. Մոնթրէալ
- 2. Թորոնթօ

ՅԼՈՐ ՀԱՔԻ/ԵՐԷՑՆԵՐ

- 1. Մոնթրէալ
- 2. Թորոնթօ



Mike's Photos

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ

Տ.Շ. ՄՈՆԹՐԵԱԼ

Ընթացիկ տարեշրջանի իր գործունեությունների ծիրիններս, Կիրակի, 15 Սեպտեմբեր 2013-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Շրջանային Վարչությունը կազմակերպեց մարզական պատասխանատուներու միօրեայ սեմինար մը, որ տեղի ունեցաւ Օնթարիո նահանգի Կանանոք քաղաքի «Կանանոք Ին» պանդոկին մէջ:

Սեմինարը սկսաւ առաւօտեան ժամը 9.30-ին: Ներկայ էին մարզական խորհուրդի անդամներ, մարզիչներ եւ պատասխանատուներ, ընդհանուր՝ 28 անդամներ:

Շրջանային Վարչության ատենապետ եղբ. Տիրան Շահինեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ապա շեշտեց սեմինարին կարեւորությունը եւ նպատակը, մասնակցողներուն թելադրելով ամբողջական գործակցություն: Ան նաեւ փափաք յայտնեց, որ սեմինարը հասնի լաւագոյն արդիւնքներու:

Սեմինարի ժողովական բաժնին մէջ քննուեցան հետեւեալ նիւթերը՝

- Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական 9-րդ մարզախաղեր:
- Գանատայի շրջանի 43-րդ մարզախաղեր:
- Համահայկական Խաղեր:
- Շրջանի մարզական առօրեայ հարցեր:

Ապա, քոյր Լէոնի Սարմազեան գեկուցեց Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական 9-րդ մարզախաղերու մասին, որոնք տեղի ունեցան



ցան 27 Յուլիսէն 3 Օգոստոս 2013-ին, Երեւանի մէջ: Ան ներկայացուց տեսերիզ մը խաղերէն, որմէ ետք գործնական թելադրանքներ կատարեց համա-Հ.Մ.Ը.Մ.-ական յաջորդ մարզախաղերու նախապատրաստական աշխատանքներուն մասին:

Սեմինարի դաստիարակչական բաժնով ներկայացուեցաւ երկու նիւթ՝

Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչության նախկին անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան դասախօսեց «Մարզիչներու բարելաւումն ու դաստիարակությունը, որպէս հիմք՝ միութեան մարզական վերելքին» նիւթը:

Եղբ. Գրիգոր Դերձակեան ներկայացուց «Մարզիչի մը դիմագրաւած մարտահրաւէրները» նիւթը:

Սեմինարի մասնակիցները մեծապէս գնահատեցին ներկայացուած նիւթերը: Քաջալերական էր տեսնել ներկաներու ցուցաբերած հետաքրքրությունը եւ մասնակցությունը զոյգ դասախօսություններուն:

Ժողովի աւարտին, եղբ. Տիրան Շահինեան իր փակման խօսքին մէջ շնորհաւորեց մասնակիցները՝ օրակարգի նիւթերուն իրենց լուրջ մօտեցումին համար, գնահատեց մարզիչներուն կատարած աշխատանքը, յաջողություն մաղթեց բոլոր մասնաճիւղերուն եւ յատուկ շնորհակալություն յայտնեց դասախօսներուն:

Միօրեայ սեմինարը վերջ գտաւ յետմիջօրէի ժամը 4.30-ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:





Թղթակից ԵՐԵՒԱՆ

Օգոստոսի 6-16-ը Քուլթայիսում անցկացուած համավրաստանեան տարեկան բանակմանը իր մասնակցութիւնը բերեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի պատուիրակութիւնը՝ բաղկացած 42 անդամներից:

Բանակման ընթացքում հնարաւոր եղաւ բացայայտել ու զարգացնել սկաուտական սեփական ներուժը, ինչպէս նաեւ շփուել տարբեր երկրներից ժամանած սկաուտների հետ:



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ 16-ՐԴ ՀԱՄԱՔԸ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

Համաշխարհային երիտասարդական մշակութային փոխանակման 16-րդ սկաուտական հաւաքն անցկացուեց Սեպտեմբերի 4-14ը Օմանում: Ճանաչողական այցերով եւ բովանդակայից ժամանցով յագեցած ծրագրին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը ներկայացնում էին եղբայրներ Տարօն Գիւլիւմեանն ու Հայկ Դաւթեանը, ովքեր հնարաւորութիւն ունեցան ներկայացնել հայկական մշակոյթն ու ծանօթանալ ինչպէս հիւրընկալող կողմի, այնպէս էլ մասնակից 20-ից աւել երկրների մշակութային առանձնայատկութիւններին:

Ծրագրի շրջանակներում մասնակիցներն այցելեցին իրասար բաղաքի պատմամշակութային վայրեր, արդիւնաբերական կենտրոններ: 4 օր շարունակ անոնք մասնակիցը դարձան Սալալա անապատում անցկացուող սկաուտական բանակմանը:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-Ի ԶՈԿԱՏԸ «ԲԱԶԷ-2013» ՀԱՄԱՔԻ ՅԱՂԹԱԿԱՆ

Թղթակից ԵՐԵՒԱՆ



«Բազէ-2013» համահայկական երիտասարդական հաւաքը այս տարի Ծաղկաձորում համախմբեց հարիւրաւոր երիտասարդների, ինչպէս Հայաստանից, այնպէս էլ Սփիւռքից: Մարզական, մշակութային եւ ընդհանուր զարգացման առողջ մրցակցութեան արդիւնքում Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ջոկատը ճանաչուեց լաւագոյնը եւ վայելեց յաղթանակի բերկրանքը:

ԳԱԳԱԹԸ ՄԵՐՆ Է



**Թղթակից
ԵՐԵՒԱՆ**

պատանիները Արագածի գագաթին ծածանեցին ԵՌԱԳՈՅՆԸ եւ իրենց կեանքում նուաճած առաջին բարձունքը նուիրեցին Հ.Հ. ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆԸ :

«**Խ**աղաղութեան սուրհանդակներ» ծրագրում ներառնուած երեխաների հերթական ձեռքբերումը Արագածի բարձունքի նուաճումն էր: Շուրջ երկու հարիւր յիսուն պատանիներից բաղկացած խումբը հմուտ խմբապետների ուղեկցութեամբ Սեպտեմբերի քսանմէկը դիմաւորեց Արագածի հարաւային գագաթին: Բարգուծիւններով եւ փորձութիւններով լի ճանապարհը հնարաւոր եղաւ յաղթահարել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտների հետ միասին:

Յաղթանակի ու հպարտութեան անթաքոյց զգացումով



ԲԱՆԱԿՈՒՄ, ԲԱՆԱԿՈՒՄ, ԲԱՆԱԿՈՒՄ Է...

(«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿՆԵՐ» ԾՐԱԳԻՐ)

**Թղթակից
ԵՐԵՒԱՆ**

Կարիքաւոր ընտանիքների երեխաների համար ամիսներ առաջ մեկնարկած «Խաղաղութեան սուրհանդակներ» ծրագրի շրջանակներում Օգոստոսի 19-24 Բիւրականում անցկացուեց սկաուտական բանակում, որին մասնակցեցին 350 պատանիներ Հայաստանի տարբեր մարզերից:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

ՀՄԸՄԻ Լոս Անճելոսի մասնաճիղի ամառնային բանակումը տեղի ունեցավ Ֆրեյժեր Փարք գտնուող ՀՄԸՄԻ Թեքուիա բանակավայրին մէջ, 28 Յուլիսէն 4 Օգոստոս երկարող շաբթուան ընթացքին, մասնակցութեամբ 65 սկաուտներու:

Բանակումէն օր մը առաջ, Շաբաթ, 27 Յուլիսին, մասնաճիղէն խումբ մը բանակավայր մեկնեցաւ, նախապատրաստական աշխատանքները կատարելու նպատակով:

Բանակումին ընթացքին, 4-18 տարեկան սկաուտներ մասնակցեցան շարք մը խաղերու, երգեր սորվեցան, լողացին, ձեռային աշխատանքներ կատարեցին, նիզակով նշանառութեան փորձերու, դասախօսութիւններու եւ խառուկահանդէսներու մասնակցեցան, ինչպէս նաեւ գիշերեցին վրաններու տակ:

Բանակումին դաստիարակչական բաժինին համար հրաւիրուած էին շարք մը հիւր դասախօսներ, ներառեալ՝ Քալիֆորնիոյ ոստիկանութենէն եւ ՀՄԸՄԻ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութենէն ներկայացուցիչներ:

Բանակումին փակման դրօշակի արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 3 Օգոստոսին, որ նաեւ բանակումի այցելութեան օրն էր:

Մօտաւորապէս 50 ծնողներ ու համակիրներ ներկայ եղան արարողութեան, որուն ընթացքին տեղի ունեցաւ նաեւ սկաուտական նոր պաշտօններու եւ աստիճաններու տուչութիւն: Արարողութեան ընթացքին մասնաճիղի խմբապետութեան պաշտօնը շնորհուեցաւ եղբ. Նարեկ Մեծաչեանին:

Ամբողջ բանակումին ընթացքին, ծնողներէ եւ վարչական անդամներէ կազմուած օժանդակ մարմինը նպաստեց բանա-

կումին յաջողութեան եւ պատրաստեց համեղ ճաշեր: Մասնաճիղի հանրային յարաբերութեանց յանձնախումբը բանակումէն լուսանկարներ գետեղած է դիմատետրի եւ համացանցի հետեւեալ կայքէջերուն վրայ՝ www.facebook.com/homenetmenla եւ www.homenetmenla.org

«ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

27 Օգոստոս 2013-ին, Արեւմտեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանի «Սիւլահեան» դահլիճին մէջ ընդունեց այցելութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիղի վարչութեան՝ գլխաւորութեամբ ատենապետ եղբ. Թոմիկ Աբրահամեանի: Ներկայ էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւիթեան:

Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան ողջունեց այս այցելութիւնը եւ բարձր գնահատեց «Արարատ» մասնաճիղի բեղուն գործունէութիւնը, որ հպարտութիւն կ'առթէ ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ին, այլեւ ամերիկահայութեան ու մեր ամբողջ ժողովուրդին: Ան օրհնեց «Արարատ»ի վարչականներուն եւ կամաւորներուն նուիրումը՝ մաղթելով, որ 35-ամեակի հանգրուանը ըլլայ նոր մեկնակետ մը դէպի նոր նուաճումներ:

ՅԵՏ ՄԱՀՈՒ ՆԱՄԱԿ

(ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ԷՍԿԻՊԱՇԵԱՆԻ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Հրաչ Տեր Սարգիսեան ՄՈՆԹՐԵԱԼ

Շուտ մեկնեցար այս աշխարհէն եւ դառն սուգի մատնեցիր ընտանիքդ, հարազատներդ, աշակերտներդ եւ միութենական քոյրերդ ու եղբայրներդ: Ժամանակէ մը ի վեր կը տառապէիր անբուժելի հիւանդութեամբ, բայց շնորհիւ յամառ կամքիդ եւ իւրայատուկ բնաւորութեանդ, մինչեւ վերջին հրաժեշտդ, կեանքի դժուարութիւններուն դէմ պայքարեցար առանց գանգատելու, բան չպատահածի պէս:

Այսօր, տխուր նստած՝ յիշողութեանս մէջ կու գան անցեալի մեր երանելի օրերէն պահեր, որոնք որոշ չափով մը կը մխիթարեն ու կը սփոփեն հոգիս:


Կը յիշե՞ս սիրելի ընկերս,

Համալսարանական կեանքի մեր չորս տարիները Լիզպոն, Փորթուկալ, ուր սկիզբը դրուեցաւ մեր բարեկամութեան: Բարեկամութիւն մը, որ հետզհետէ զարգանալով մեզ դարձուց անբաժան ընկերներ:

Որպէս մարմնակրթանքի ապագայ ուսուցիչ-մարզիչներ, չորս տարի օտարութեան մէջ ապրելով, մասնագիտական դասընթացքներու կողքին, մենք մեր առօրեային մէջ օրական անդրադարձանք հայութիւնը յուզող տագնապներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ը մտահոգող հարցերուն: Մենք ուխտեցինք ազգային մեր ծառայութիւնը կատարել Հ.Մ.Ը.Մ-ի միջոցով, նուիրուելով հայ պատանիին ու երիտասարդին մարմնակրթական դաստիարակութեան գործին, որպէսզի ապագային անոնք ըլլան բարձր մակարդակի մարզիկներ, տիպար հայեր եւ երկրի օգտակար քաղաքացիներ:

Սիրելի՛ ընկերս,

Գիտեմ որ երբեք չես սիրած գովասանք, փառք ու պատիւ, բայց քու անբասիր նկատարարութեամբ քեզ համար շատ արժեքաւոր էր:



ըրգիւղ, բարի ու հայրենասէր հոգիդ, եսասիրութենէ եւ ինքնագովութենէ հեռու մնացող կերպարդ եւ քու ունեցածդ բարեկամներուդ եւ ընկերներուդ հետ բաժնեկցելու անհուն գոհունակութիւնդ քեզ սիրցուցին բոլորէն:

Ուրախալի էր տեսնել անցեալի աշակերտներ, որոնք քեզ կը բարեւէին «Քոչ» կամ «Ըսթէզ» ըսելով, ինչ որ սիրոյ եւ յարգանքի արտայայտութիւններ են եւ կը վկայեն ուսուցչական ասպարէզիդ յաջողութիւնը:

Անգամուան մը համար թոյլ տուր որ գնահատեմ քու անսակարկ ծառայութիւնդ Հ.Մ.Ը.Մ-ին, ի մասնաւորի լիբանանեան աթլետիկային եւ ԼԵՎԱՄ-ի խաղերուն ունեցած մեծ ներդրումիդ համար: Չես կրնար պատկերացնել, թէ ինչքան ուրախացայ, երբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը «Ծառայութեան» շքանշանով գնահատեց քեզ:

Կը յիշե՞ս...

Անցեալ տարի, ճամբորդութեան մը ընթացքին «պատահմամբ» Լիբանան քեզի այցելեցի: Այսօր կ' ուզեմ խոստովանիլ, որ իմ այցելութիւնս «պատահմամբ» չէր, այլ՝ ծրագրուած էր: Պարզապէս ուզեցի ձեռով մը քովդ ըլլալ, վերապրիլ մեր բարեկամութեան լաւ օրերը եւ փորձել ի հարկին սփոփել հոգեկան վիճակդ...

Այցելութեանս ընթացքին, հակառակ քու տժգոյն երեսիդ, հակառակ քու Ֆիզիքական նշմարելի մաշումիդ, ո՛չ թէ ես, այլ դուն սկսար մխիթարանքի խօսքերով գովել կեանքի լաւ կողմերն ու բնութեան բարիքները եւ շեշտեցիր, որ ուժեղ ըլլամ կեանքի բոլոր խոչընդոտներուն դիմաց... վստահ եղիր, որ կարողացար կեանքի քու դրական մօտեցումովդ որոշ չափով մխիթարել իմ վիշտն ու ալեկոծ հոգին...

Այսօր մեզմէ յաւիտ բաժնուած ես, բայց յիշատակդ միշտ վառ պիտի մնայ մեր սրտերուն ու հոգիներուն մէջ:

Վարձքդ կատար, սիրելի՛ եղբայր:

Խուճկ ու մոմ անթառամ յիշատակիդ:






ՑԿԵԱՆՍ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ «ՊԶՏԻԿ ԱԲՕ»Ն

Ս.Ս. ԼՈՍ ԱՆՃԵԼՏ

Աբրահամ Նէնէճեան անունը քիչերու ծանօթ է, սակայն երբ ըսէք Պզտիկ Աբօ, Հ.Մ.Ը.Մ.ի «Պզտիկ Աբօ»ն, արդէն հարցը կը փոխուի: Անմիջապէս ձեր մտապատկերին մէջ կը վերականգնի Ֆուլթոնի ըսքանչի մարզիկ մը, Հ.Մ.Ը.Մ.ի մարզաշխարհի մէկ աստղը, որ Լիբանանի երկնակամարին վրայ փայլեցաւ 1960-ական եւ 1970-ական տարիներուն, լիովին մարմնաւորելով Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանախօսքը, խմբակիցներու հետ բարձունքներ նուաճեց, միասնաբար բարձրացուցին Հ.Մ.Ը.Մ.-ը, բայց միշտ մնաց համեստ ու ազնիւ մարզիկ, եւ վերջերս, անողոք հիւանդութեան դէմ երկար պայքարէ ետք, սուսիկ-փուսիկ հեռացաւ այս աշխարհէն, անմոռանալի անուն թողելով Հ.Մ.Ը.Մ.ի մարզական յուշամատեններուն մէջ:



Հարունակուած է մրցադաշտերէն Աբոյին հրաժեշտէն ետք այլ: Այդ պատմութիւնը կերտուած է շնորհիւ տաղանդաւոր մարզիկներու, որոնցմէ շատեր ճանչցուած են ու պատմութեան անցած՝ իրենց ծածկանուններով: Աբրահամ Նէնէճեանը ծանօթ էր իբրեւ «Պզտիկ Աբօ», որովհետեւ երբ ան կը միանար խումբին, հոն կար ուրիշ Աբօ մը, ծանօթ «Մեծ Աբօ» անունով, որ նաեւ խմբապետ էր եւ դաշտին տիրապետող միջնապահ: Անոնց կողքին կային «Ուստա (վարպետ) Լեւոն»ը, «Ճոքի»ն, «Պոյինկ Վարուժ»ը, «Ոսկի Գլուխ Յակոբիկ»ը, «Կոլար Եղիշ»ը եւ «Հայաստանցի Խաչիկ»ը: Քիչեր ճանչցուած էին իրենց բուն անուններով, ինչպէս Անդրանիկ Մարեանը (նախապէս Հայկալի Անդօն, յետոյ նաեւ Լոս Անճելոս, միշտ Հ.Մ.Ը.Մ.ական տարագրով), Վազգէնը, Աբոյին կրտսեր եղբայրը՝ Սազօն, Հրայրը, բերդապահ Յակոբը եւ ուրիշներ, որոնք միասնաբար բարձր պահած են Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը, թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Միջին Արեւելքի մէջ, շահելով ախոյեանութիւն ու բաժակ, նուաճելով Ասիոյ փոխ ախոյեանի տիտղոսը:

Խօսքը այն տարիներուն մասին է, երբ Լիբանան կ'ապրէր պայծառ օրեր, չէր բզկտուած պատերազմով: պայծառ էր նաեւ անոր մարզական երկինքը: Ծիշդ է, ճակատագրական կարգ մը մրցումներ կը խաղցուէին երկտրականացած մթնոլորտի մէջ, ճիշդ է նաեւ, որ դաշտին վրայ թէ մարզասէրներուն միջեւ տեղի կ'ունենային տաք ու երբեմն ալ արիւնալի կռիւներ (ո՛ւր չի պատահիր նաեւ այսօր...), սակայն մարզական ոգին միշտ ալ յաղթական դուրս կու գար շնորհիւ գայն մարմնաւորող մարզիկներու, որոնցմէ գուրկ չէին լիբանանեան բոլոր խումբերն այլ: Եթէ Հ.Մ.Ը.Մ.ը ունէր Հ.Մ.Մ.ի, Ռասիւնի, Նըժմէի ու Մագրապի նման արժանաւոր մրցակիցներ, կը պատահէր նաեւ, որ մրցակից մարզիկները յաճախ կողք-կողքի մրցէին Լիբանանի ազգային խումբին տարագրով, կամ՝ երբ խումբ մը հիւր կ'երթար այլ երկիր, Լիբանանի մէջ կը հիւրընկալուէր այլ երկրի մը մէկ խումբը:

Այդ օրերը տարբեր էին, ինչպէս որ տարբեր էին այդ ժամանակը կերտող մարզիկները, որոնցմէ մէկն ալ «Պզտիկ Աբօ»ն էր: Եթէ այսօր պահ մը այցելէնք այդ օրերու մեր մամուլին մարզական էջերը, այս իմաստով տեղեկագրական հսկայական հարստութիւն պիտի գտնուի հոն: Տակաւին, խօսքը կը վերաբերի այն տարիներուն, երբ հայկական մարզաշխարհը կ'ապրէր ոսկեղար մը. եթէ Լիբանանի մէջ կար աստղերով հարուստ Հ.Մ.Ը.Մ.ը, Հայկալը ունէր իր աստղագարը Հ.Մ.Ը.Մ.ը՝ Ծորճիկով, Աւրանով, Թովմասեանով, Գօգօներով եւ ուրիշներով: անդին, Հայաստան ալ ունէր «Արարատ»ը, որ մեծ նուաճումներ կ'արձանագրէր Խորհրդային աշխարհին մէջ, տիրանալով բաժակի եւ ախոյեանութեան: Հայ երիտասարդը այդ օրերուն հաւասարապէս հպարտ կը զգար Հ.Մ.Ը.Մ.ի յիշեալ աստղերով, ինչպէս նաեւ «Արարատ»ի Ղազարեանով, Մարգարովով, Իշտոյեանով, Զանազանեանով, Խորէնով եւ մարզիչ Միմոնեանով: Այդ օրերուն, մարզաշխարհը այս օրերուն չափ չէր առեւտրականացած, մարզիկներ իրենց անունը ցկեանս կը կապէին որոշ

խումբի մը անուն, ու այդ ակումբին անունն ալ կը լուսաւորուէր իր աստղերուն շնորհիւ:

Մարզական աշխարհը տարբեր տրամաբանութեամբ կը բանի տասնամեակներէ ի վեր. արհեստավարժութիւն պիտակի տակ, նախկինէն շատ բան աղաւաղուած է. մարզիկ մը կրնայ ծնիլ այս երկրին մէջ, հուշակ կը շահի որոշ ակումբի մը խումբին շարքերուն, կրնայ շուտով «ծախուիլ» նոյն երկրի մրցակից մէկ խումբին ու յաջորդ եղանակին՝ կոլեր նշանակել իր երէկի խումբին բերդէն ներս: Սովորական դարձած է տեսնել «ամբաճիգ» մարզիկ մը, որ այս եղանակին, կոլ մը նշանակելէ ետք, լուսանկարիչներու ոսպնեակներուն դիմաց համբուրէ իր այս տարուան կրած շապիկը, խումբին նշանակը, իսկ յաջորդ եղանակին, նոյն վարմունքը ցուցաբերէ երէկի մրցակիցին շապիկով: Նախապէս, մարզաշխարհը տարբեր տրամաբանութիւն ունէր:

Պոպի Զարլթըն մը կը խորհրդանշէր Մանչեսթըր Եունայթթըտ եւ վերջ, ինչպէս որ Լեւոնը, Աբօներն ու խմբակիցները կը խորհրդանշէին Հ.Մ.Ը.Մ.ը: Ֆուլթոնն ու Ֆուլթոնիստները այսօրուան պէս գերի չէին «սակարան»ին: Համաշխարհայինացումը իր մականը այսքան զգալի չէր ըրած մարզական

կեանքին մէջ: Մարզիկ մը չէր հրապուրուէր այլ ակումբի մը գրաւիչ խոստումներով: Այս իմաստով ալ, «Պզտիկ Աբօ» եւ սերնդակիցները եղան ու մնացին Հ.Մ.Ը.Մ-ական, հպարտութեամբ կրեցին եռագոյն տարազը, անոնց համար մարզական իւրաքանչիւր մրցում եղաւ ազգային հպարտութիւն պաշտպանելու ասպարէզ, ու անոր համար ալ յաջողեցան բարձունքներ նուաճել: Տարիքի կամ տեղափոխութիւններու

պատճառով երբ անոնք հեռացան իրենց սիրելի խումբէն, Հ.Մ.Ը.Մ-ը մնաց իրենց սիրտերուն ու հոգիներուն մէջ, իրենց սիրանքներուն հպարտութիւնը իրենց էութեան մէջ կրեցին ցկեանս:

«Պզտիկ Աբօ»ն կրնայ Ֆիզիքապէս հեռացած ըլլալ աշխարհէն, սակայն կասկած չկայ, որ Հ.Մ.Ը.Մ-ը կը շարունակէ սաւառնիլ անոր հոգիին հետ:

ԵՂԲ. ԲԱՐՍԵՂ ԳԱՒՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի Մասնաճիւղի Վարչութիւն ԱՆԹԻԼԻԱՍ

«Ո՞վ կրնայ առագաստանաւ մը բռնել առանց հովի, ո՞վ կրնայ ընկեր մը ձգել առանց արցունքի...»:

Այսպէս, սերունդէ սերունդ, սիրելի մը բաժանումի պահուն կը հնչեն այս բառերը եւ յուզումով տեղի կ'ունենայ բաժանումը: Այդ բաժանումը կ'ըլլայ Ֆիզիքական, որովհետեւ բաժնուողին յիշատակը կը մնայ վառ, գործը՝ անմոռանալի:

Այդպէս է պարագադ, սիրելի՛ եղբ. Բարսեղ: Քանի մը ամիսէ ի վեր դուն հեռացած ես ընդմիշտ, մեր մօտ վառ պահելով յիշատակդ եւ կատարած գործերուդ վաստակը:

Գործի հանդէպ սէրը, սիրելի՛ եղբայր, ինչպէս սերնդակիցներուդ, կարծես քեզի ալ տրուած էր ի ծնէ: Պատանի հասակէդ անդամակցեցար Հ.Մ.Ը.Մ-ին եւ ըմբռնեցիր համեստութեան, նուիրումի, անձնագոհութեան արժէքները, եւ մանաւանդ՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանի ոգին, զանոնք վերածելով առօրեայ կեանքի գործելաոճի:

Եղբայր Բարսեղը պիտի յիշենք իր ա՛յս յատկանիշներով: Անցնելով կեանքի ճամբուն վրայ գտնուող երիտասարդութեան հանգրուանը, եղբայր Բարսեղ հիմնեց ընտանեկան բոյնը, եղաւ տիպար ամուսին, գուրգուրոտ հայր եւ ապա՝ մեծ հայր: Ընտանեկան առօրեային միացուց միութենական առօրեան: Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի փայլուն Ֆուլթայոյիստ, ան անցաւ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական խումբ, զուգահեռ՝ ստանձնելով վարչական պարտականութիւններ:

Ֆուլթայոյի ասպարէզին մէջ խորանալով, եղբայր Բարսեղ ստացաւ իրանանեան Ֆուլթայոյի իրաւարարի կոչում, եւ արդարօրէն գործելով եղաւ միջազգային իրաւարար: Շարունակելով, նուիրումի ճամբուն վրայ ան ստանձնեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Ֆուլթայոյի ներկայացուցչական



յան ձևա-
խումբին
ատենապե-
տութիւնը:
1970-ին,
Հ.Մ.Ը.Մ-ի



Անթիլիասի մասնաճիւղի հիմնադիր ժողովին մասնակցելով, ան ընտրուեցաւ մասնաճիւղի անդրանիկ վարչութեան անդամ:

Եղբայր Բարսեղ արժանացած էր Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան գնահատանքի գիրին եւ «Մտայութեան» շքանշանին:

Եղբայր Բարսեղմիշտ եղած է գործունեայ Հ.Մ.Ը.Մ-ական: Իբրեւ իրաւարար ան իր մասնակցութիւնը բերած է համա-Հ.Մ.Ը.Մ-ական Զ. մարզախաղերուն, Պէյրութ: Յիշատակելի է անոր ղեկավարած մէկ մրցումը, որ իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի եւ Մ. Նահանգներու վեթերանները:

Եղբայր Բարսեղ եղած է այն համեստ անձերէն, որոնք միութեան արժէքը գերադասելով, ճիգ չեն խնայած իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը բերելու Հ.Մ.Ը.Մ-ին, օգտակար ըլլալով տասնեակ մը Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներու, գործի հրաւիրելով զանոնք իր իսկ արհեստանոցին մէջ: Այսպէս էր եղբայր Բարսեղը, անտեսելով իր ունեցած պաշտօնները, ան միշտ գործած է համեստութեամբ եւ ծառայասիրութեամբ:

Եղբայր Բարսեղ, ահա, քանի մը ամիսէ ի վեր Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղէն Ֆիզիքապէս բաժնուած ես, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքէն անակնկալօրէն հեռացած ես: Դուն մեկնած ես՝ խիղճդ հանգիստ, խաղաղութեամբ եւ պարտականութիւնդ կատարած ըլլալու գոհունակութեամբ:

Ժպիտդ թող վերածուի հովի, որուն միջոցով յառաջ թող երթայ Հ.Մ.Ը.Մ-ի առագաստանաւը:

Հողը թեթեւ գայ վրադ, եղբայր Բարսեղ:

ԵՂԲ. ՎՐԷԺ ՔԵՇԻՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ
ԶՈՀՈՒԱԾ ՍՈՒՐԻԱՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ)

Րաֆֆի Սիլահեան ՀԱԼԷՊ

Սուրիական տազնապի արիւնալի դէպքերը կը շարունակուին ամիսներէ ի վեր: Տագնապը մեծ ցաւ ու վիշտ պատճառած է սուրիահայ հազարաւոր ընտանիքներու, որոնց գաւակները, հարազատներն ու բարեկամները նահատակուած կամ վիրաւորուած են դէպքերու ընթացքին:

Եղբ. Վրէժ Քէշիշեան, 1992-ի ծնունդ հայ



լածը, հարիւր տոկոսով հաւատարիմ՝ մնալով Աստուծոյ, ծառայելով ազգին ու հայրենիքին:

Եղբ. Վրէժին սկառուտական առաջին օրերը եղան Հ.Մ.Ը.Մ-ի «Գրիգոր Յակոբեան» բաժինին մէջ: Բարեկիրթ, ազնիւ, ընկերասէր, համեստ եւ աշխատասէր եղբոր մասին խօսքեր դանելը դժուար է այժմ:

Եղբ. Վրէժ, յուզումով, արցունքով, բայց միաժամանակ հպարտութեամբ արձանագրած այս տողերուս մէջ կ'ուզեմ վկայակոչել այն անմոռանալի օրերը, երբ կը կրէիր Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտական տարազը:

Կարելի չէ մոռնալ 2008 տարեշրջանին Քեսապի մէջ կատարուած «Գրիգոր Յակոբեան» արի-արենոյ՝ միաւորի տարեկան բանակումին յիշատակելի օրերը, ուր ներկայ էիր դուն



որպէս տիպար, աշխատասէր եւ օրինակելի անդամ: Կարելի չէ մոռնալ նոյն տարուան խարուկահանդէսը, որ անձրեւի պատճառով կիսատ մնաց: Օրին, դուն եւ խումբի ընկերներդ ներկայացաք ինծի եւ խոստացաք աւելի լաւը կատարել Հալէպի Հ.Մ.Ը.Մ-ի պասքէթի դաշտին վրայ եւ ձեր խօսքը յարգելով կատարեցիք զայն ամենայն ձեռնհասութեամբ:

Կարելի չէ մոռնալ սկառուտական Նորագիրի վկայականը ստացած պահուդ դէմքիդ անմեղ ժպիտը:

Կարելի չէ մոռնալ յարգանքդ, հնազանդութիւնդ, ընկերասիրութիւնդ եւ ժպտերես դէմքդ:

Այս բոլորին կողքին անկարելի է մոռնալ շրթներէդ բարձրաձայն հնչած «Պատրա՛ստ» սկառուտական կոչին արձագանգը:

Այսպէս, եղբայր Վրէժ կատարեց Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտական խոստումին առաջին յոդ-

որպէս տիպար, աշխատասէր եւ օրինակելի անդամ: Կարելի չէ մոռնալ նոյն տարուան խարուկահանդէսը, որ անձրեւի պատճառով կիսատ մնաց: Օրին, դուն եւ խումբի ընկերներդ ներկայացաք ինծի եւ խոստացաք աւելի լաւը կատարել Հալէպի Հ.Մ.Ը.Մ-ի պասքէթի դաշտին վրայ եւ ձեր խօսքը յարգելով կատարեցիք զայն ամենայն ձեռնհասութեամբ:




Սիրելի՛ եղբայր Վրէժ, նահատակութեամբդ դարձար իտէպը հարիւրաւոր Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներու: Անոնց մէջ սերմանեցիր հաւատարմութեան եւ գոհողութեան ոգի, ըլլալու համար միշտ պատրաստ՝ յանուն Սուրիոյ խաղաղութեան: Ժիշդ է, որ դուն այսօր Ֆիզիքապէս հեռու ես ընտանիքէդ, հարազատներէդ, ընկերներէդ եւ Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներէդ ու քոյրերէդ, բայց յիշատակդ անթառամ պիտի մնայ մեր բոլորին սրտերուն մէջ:

Հողը թեթեւ գայ վրադ սիրելի եղբ. Վրէժ Քէշիշեան:

ՍԷՆՏՈՒԻՉՆԵՐԸ

**Պատրաստեց՝ Շադիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ**




Սենտուիչները, զորս այնքան շատ կ'օգտագործենք, լոյս աշխարհ եկած են 18-րդ դարուն եւ իրենց ստեղծիչին՝ Լորտ Ճոն Մոնթեքիու Սենտուիչի անունով ալ կոչւած են սենտուիչ:


Սենտուիչ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարն էր: Կ'ըսեն, թէ ան շատ խաղամուլ եղած է: Ան կրնար օրեր շարունակ խաղալ՝ առանց ընդմիջումի: Անգամ մը ան խաղասեղանին առջեւ նստած մնացած է քսանչորս ժամ եւ չէ զգացած, թէ որքան անօթեցած է: Վերջապէս, երբ կը յիշէ ուտելու մասին, կը պատուիրէ հացի մը մէջ տապկուած միսի երկու կտոր դնել եւ բերել խաղասեղանին մօտ: Ահա այս արագ պատրաստուող ուտելիքին շնորհիւ ան

կը յաջողի օրեր շարունակ խաղասեղանին դիմաց նստիլ կուշտ փորով:

Լորտին օրինակին հետեւելով, այնուհետեւ, շատեր կը սկսին նման բրդուճներ պատրաստել եւ զանոնք սենտուիչ կոչել: Սենտուիչը կարելի է ուտել առանց պատառաքաղի եւ դանակի, եւ այդ պատճառով ալ հաճելի կը թուի բոլորին: Սենտուիչի գործածութիւնը կը տարածուի աշխարհի տարածքին: Այսօր ան արագ սնունդի ամէնէն տարածուած միջոցներէն մէկն է, սակայն աւելի համեղ կ'ըլլայ, երբ զայն կը պատրաստես անձա՛մբ:



ԲԱԶՄԱԲՆԵՑ ՏԵՍԲՈՎ ՔԱՂԱՔԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Քարայիպեան աւազանին Քիւրասաօ կղզիին նահանգապետը չէք գիտեր ինչո՞ւ օրին մէկը այն համոզումը կ'ունենայ, թէ իր գլխու մնայուն ցաւերուն պատճառը... շէնքերու համատարած ճերմակ գոյնն է: Ուստի, ան քաղաքացիներուն կը հրահանգէ. «Ձեր տուները ի՛նչ գոյն որ կ'ուզէք ներկեցէք, բայց ոչ ճերմակ»:

Ահա, այսպէս, Քիւրասաօյի մայրաքաղաքը մարդու մը հիւանդութեան պատճառով կը ստանայ խայտաբղէտ տեսք: Այժմ Քիւրասաօյի մայրաքաղաքը ԵՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգութեան ցանկին մէջն է:



ՈՉՆԻՆԵՐԸ

Ոգնինները փոքր եւ միջին մեծութեամբ կենդանիներ են: Անոնց կը հանդիպինք կլիմայական գրեթէ բոլոր գօտիներու մէջ: Մեզի յայտնի են ոգնիններու քսան տեսակներ, որոնք մաս կը կազմեն երկու ենթարնտանիքներու՝ առնչտանման ոգնիններ եւ իսկական ոգնիններ: Իսկականներուն բնորոշ են կարճ պոչը, մէջքին փուշերու առկայութիւնը եւ մկանները, որոնց կծկումէն մարմինը կը վերածուի փշապատ գնդակի: Այս տեսակին մենք շատ կը հանդիպինք: Անոնք կը բնակին անտառներու, այգիներու, թփուտներու եւ կիսանապատներու մէջ: Անոնք հեռու կ'ըլլան ջրային տարածքներէ:

Բնութեան մէջ ոգնինները ոչ միայն կը բնակին ջրային տարածքներէ հեռու, այլեւ՝ կը խուսափին անձրեւէն, որովհետեւ ջուրի կաթիլ մը եթէ իյնայ ոգնիի մը վրայ, ոգնիին փշոտ գնդակը կը գոցուի եւ ան չի կրնար պաշտպանել ինքզինք: Այս թուլութիւնէն կ'օգտուին անոնց թշնամիները, որոնք ոգնիններու վրայ յարձակելով, առաջին բանը

գոր կ'ընեն, գանոնք կը մօտեցնեն ջրային տարածքներու:

Ոգնինները կը հաղորդակցին սուրոցներով, բայց եթէ յանկարծ բարկանան՝ կը սկսին փնթփնթալ: Այս իւրայատուկ կենդանիները շատ քիչ կ'ապրին, հազիւ վեց տարի: Այդ տարիներու մեծ մասն ալ անոնք քնացած կ'անցընեն, որովհետեւ ոգնինները ձմրան խորքուն կը մտնեն: Կը քնանան մօտաւորապէս 127 օր: Իսկ գարնան հազիւ արթննան կ'աճապարեն բան մը ուտելու եւ կեր փնտռելով այս ու այն կողմ կը հեռացնեն թուփերը, իսկ այդ խշռոցէն շատ դիւրին կ'ըլլայ անոնց տեղը գտնելը, ինչպէս մեզի, նաեւ միւս կենդանիներուն համար:


Ոգնինները աղմուկով կ'ուտեն: Անոնք կ'ուտեն տարբեր տեսակի միջատներ: Ընտանեկան կեանքը ոգնիններու քով յաջող չէ: Փոքրիկներու ծնունդէն անմիջապէս ետք հայր-ոգնին կը հեռանայ անոնցմէ, խնամակալութիւնը վստահելով մայր-ոգնիին: Իւրաքանչիւր ընտանիքի մէջ կը ծնի հինգ ոգնի: Փոքրիկ ոգնիները լոյս աշխարհ կու գան մերկ եւ կոյր, կը կշռեն հազիւ 12 կրամ: Բայց քանի մը ժամ ետք անոնց վրայ կը յայտնուին փափուկ փշուկներ: Ամէն օր ոգնիններու փուշերէն քանի մը հատը կ'իյնայ, բայց



անոնց փոխարէն կ'աճին նորերը, ինչպէս՝ մարդուն մազերը: Մենք կրնանք շատ հանգիստ շոյել ոգնինները: Անոնք չեն վնասեր մեզի, եթէ գանոնք շոյենք դէմքէն դէպի մէջք ուղղութեամբ:



Տարբեր Յայտացրով



Էլի Յուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

7	3		5			9	2
4			2	7			5
		6	9		7		
	6					2	
8		7			1		6
	2					7	
		3	2		6		
6			8		1		9
1	4		7			5	3

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիինոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

6	1	2	5	8	3	7	4	9
3	9	5	7	1	4	6	8	2
8	7	4	2	9	6	5	1	3
9	6	1	4	5	8	2	3	7
2	4	3	9	7	1	8	6	5
5	8	7	3	6	2	1	9	4
1	2	9	8	4	5	3	7	6
7	5	8	6	3	9	4	2	1
4	3	6	1	2	7	9	5	8

Պատասխանը՝ յաջորդիլ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Ծաղիկներու թաղուհիի պարտեզ:
2. Զախ - Հ.Մ.Ը.Մ.ական նախկին մամուլէն:
3. Հանգոյն - Կրկնուած բաղաձայններ:
4. Եղանակաւորիչ մակբայ - Օձի տեսակ:
5. Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահը:
6. Այբուբենէն - Հայ նահապետ - Լիբանանցի երգչուհի:
7. Սերմնափակ - Սիգանք - Կրկնուած բաղաձայններ:
8. Կռած ոչխար - Արական օտար անուն - Արական օտար անուն:
9. Յոյն դիցուհի - Հացաբոյսի տեսակ:
10. Արժանթինցի անուանի նախկին Ֆուլթոնիստ-Մուհամէտի փեսան:
11. Իրերայաջորդ գիրեր - Ճշմարիտ - Ֆրանսական քաղաք - Այբուբենէն:
12. Մարտունիի գիւղերէն - Կայտառ - Տառի մը անունը:
13. Դասաժամ - Աչք - Եւրոպական երկիր:
14. Հեղ - Ճար - Տառի մը դրացիները:
15. Սեւ ազուաւ - Փոփաշուն:
16. Զրային փոխադրամիջոց - Կրկնուած բաղաձայններ - Կորուստ:
17. Կրկնուած գիրեր - Հայ գուսան - Ժխտական մասնիկ:
18. Իսմայէլի մայրը - Ամերիկացի թենիսմէն:
19. Յոյն դից - Օսմանեան շրջանի հայ նշանաւոր ճարտարապետ - Շէն:
20. Դժուար, տաժանելի - Սուր ձայն:


ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Ծախ, խափեայ - Յարգանկողին - Կտոր:
2. Լերան կատար - Հետք - Վարմունք:
3. Պարտիզակ ծնած հայ երգահանին մականունը եւ անունը:
4. Միջնադարեան Հայաստանի նշանաւոր վանքերէն - Յուցական ածական - Հայ նահապետ - Ճոկան:
5. Սարսափ - Խնդածաղիկ - Մագեղ - Միամեայ ուլ:
6. Աստուածային - Օրականով աշխատող բանուոր - Յուցական ածական:
7. Որոգայթ - Լերան շուք մասը - Գիր - Էական բայէն:
8. Արցախի հնավայրերէն - Զօրական - Կրկնուած բաղաձայններ:
9. Կարաւանի առաջնորդ՝ արու ուղտ - Յովսէփ Էմինի ծննդավայրը:
10. Ռուսերէն՝ այո՛ - Գրաբար՝ ո՞ւր - Մեծարժէք - Վազգէն Շուշանեանի երկերէն՝ «...Պատանութիւն»:
11. Պտղատեսակ - Հարթավայր - Իւրացո՛ւր:
12. Ֆրանսական քաղաք - Աշխարհի ճատրակի 13-րդ ախոյեանը (1985-2000) - Ուրուական:
13. Խոփը արօրին միացնող փայտ - Կանացի օտար շաբաթաթերթ - Մեղկանալ:
14. Տարածքի միաւոր - Բրինձ - Ստացական ածական - Կառքի շրջանակ:
15. Արական օտար անուն - Կիլիկեան լեռնաշղթայ - Թուրքիի ծննդավայրը:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻԻ 209 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒԹՈՒՄԸ





Հ.Մ.Ը.Մ. ԵՐՈՒՍԱՂԵՄ